Հավելված 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. - ի
N որոշման

<<Հավելված 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 22 - ի
N 96 - Ա որոշման

ՊԼԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ք. Գավառ

2016թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պլանով կանոնակարգվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումները:

2. Պլանի նպատակը՝

Պլանը հստակ սահմանում է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության արդյունավետ կառավարմանն ուղղված բոլոր միջոցառումները, որոշում է բոլոր մասնակից կողմերի դերերը և պարտականությունները, նկարագրում է իրականացվելիք գործողությունները: Պլանում հստակ նշված են կողմերի միջև փոխհամագործակցության, հրահանգների փոխանակման և իրավիճակներին արձագանքման շղթան, ինչպես նաև հաղորդակցման ուղիները և անհրաժեշտ տեղեկատվության ու աջակցության ստացման ուղիները:

3. Պլանի իրավական հիմքերն են՝

1) <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին >> ՀՀ օրենքը,

2)<<Սեյսմիկ պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը,

3)ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի <<ՈՒժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին>> N 919-Ն որոշումը,

4)ՀՀ կառավարության 2011թ օգոստոսի 18-ի <<Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին>> N 1180-Ն որոշումը,

5)ՀՀ կառավարության 2010թ հունիսի 24-ի <<Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու մասին>> N 824-Ն որոշումը,

6)ՀՀ կառավարության 2003թ հոկտեմբերի 16-ի <<ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին տեղեկատվության ստացման և ազդարարման կարգը հաստատելու մասին>> N 1304-Ն որոշումը,

7)ՀՀ կառավարության 2005թ նոյեմբերի 3-ի <<ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին>> N 1925-Ն որոշումը,

8)ՀՀ կառավարության 2004 թ հոկտեմբերի 29-ի <<Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին>> N 1494-Ն որոշումը,

9)ՀՀ կառավարության 2012թ մարտի 19-ի <<ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ >> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, <<ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին>> N 279-Ն որոշումը,

10)ՀՀ կառավարության 2010թ հուլիսի 8-ի <<Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին>> N 855 -Ն որոշումը:

II. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

4. ՄԱՐԶԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզը (այսուհետ Մարզ) գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելքում, մարզկենտրոնն է Գավառ քաղաքը: Տարածքը կազմում է 5348կմ^2, որից Սևանա լիճը զբաղեցնում է 1265կմ^2 տարածք:

Մարզի արևմտյան մասում է գտնվում Գեղամա լեռնաշղթան (ամենաբարձր կետը՝ Աժդահակ 3597մ), հարավում՝ Վարդենիսի լեռնաշղթան (Վարդենիս՝ 3522մ), արևելքում՝ Սևանի և Արեգունու լեռնաշղթաները (Մեծ Հինալ 3367մ):

Մարզում հոսում են 29 գետեր ու գետակներ, Արփա-Սևան թունելային ջրատարը: Առավել խոշոր գետերն են՝ Արգիճին, Գավառագետը, Մասրիկը, Մարտունին, Գետիկը:

Մարզում անտառապատ տարածքները 260կմ^2 է (ցամաքային տարածքի մոտ 6%), որից 140 կմ^2 Գետիկ գետի հովիտի բնական անտառներն են, 120 կմ^2 Սևանա լճի առափնյա տնկովի անտառները:

Մարզում կախված ռելիեֆից առանձնացվում են հետևալ գոտիները՝

1) Գետիկ գետի հովիտ (բարձրությունը ծովի մակերևույթից 1325-1896մ) զբաղեցնում է Մարզի ցամաքային տարածքի մոտ 7 %-ը:

2) Սևանա լճի մերձափնյա տարածքներ (1896-1920մ)՝ զբաղեցնում է Մարզի ցամաքային տարածքի մոտ 7 % -ը:

3) Հարթավայրային և նախալեռնային տարածքներ (1920-2250մ) զբաղեցնում է Մարզի ցամաքային տարածքի մոտ 46%:

4) Լեռնային շրջաններ (2250-3597մ) զբաղեցնում է Մարզի ցամաքային տարածքի մոտ 40%-ը:

Մարզի կլիմայական պայմանները փոփոխվում են կախված ռելիեֆային գոտիներից: Գետիկ գետի հովտում մեղմ կլիմա է զով ամառներով և ոչ շատ ցուրտ ձմեռներով: Հարթավայրային և նախալեռնային գոտիներում բարեխառն կլիմա է մեղմ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով: Ցուրտ օրերը այս գոտում հիմնականում սկսվում են նոյեմբերի առաջին տասնօրյակից և ձգվում մինչև ապրիլի առաջին կեսը: Լեռնային շրջաններում ցուրտ կլիմա է:

Մարզի ամբողջ տարածքում քամիները հիմնականում հարավ-արևմտյան ուղղության են: Ամառային ամիսներին հաճախանում են նաև հյուսիսային ուղղությամբ քամիները: Անդորրի տարեկան կրկնելիությունը մոտ 60 %-է:

4.2 Մարզը հյուսիսից սահմանակից է Տավուշի մարզին, արևմուտքից՝ Կոտայքի և Արարատի մարզերին, հարավից՝ Վայոց Ձորի մարզին, իսկ արևելքից՝ Ադրբեջանի հետ: Ադրբեջանի հետ սահմանի երկարությունը կազմում է մոտ 140 կմ:

Մարզի համայնքների թիվը 91 է, որից 5-ը՝ քաղաքային: Մարզի բնակչության թվաքանակը 264200 մարդ է, որից՝ տղամարդ՝ 133800, կին՝ 130400; քաղաքային բնակչություն 88000, գյուղական՝ 176200; մինչև 8 տարեկան՝ 31700, 8-16 տարեկան՝ 34900, 16-63 տարեկան՝ 167000, 63-ից բարձր՝ 30600:

Մարզում առկա է 360 բազմաբնակարան շենք 48338 առանձնատուն:

4.3 Մարզի տարածքով անցնում են Մ-4՝ Երևան-Սևան-Իջևան միջպետական ավտոճանապարհի 29,7կմ հատվածը, Մ-10՝ Սևան-Մարտունի-Գետափ միջպետական ավտոճանապարհի 93,2 կմ հատվածը, Մ-11՝ Մարտունի-Վարդենիս միջպետական ավտոճանապարհի 60,3կմ հատվածը, Մ-14՝ Մ-4-Շորժա-Վարդենիս միջպետական ավտոճանապարհի 97,8կմ հատվածը, Հ-29՝ Սևան-Ծաղկունք- Զովաբեր հանրապետական նշանակության ավտոճանապարհի 16,8 կմ հատվածը, Հ30՝ Մ-4-Ճամբարակ-Դրախտիկ հանրապետական նշանակության ավտոճանապարհի 44,2 կմ հատվածը: Մարզի տարածքով անցնում է 141 կմ երկարությամբ Դդմաշեն-Շորժա-Սոտք երկաթգիծը:

Մարզում՝ Մ-4 ավտոճանապարհի վրա գտնվում է՝ 10 կամուրջ, Մ-10 ավտոճանապարհի վրա՝ 11 հատ, Մ-11 ավտոճանապարհի վրա՝ 16 հատ, Մ-14 ավտոճանապարհի վրա՝ 35հատ, Հ-29 ավտոճանապարհի վրա՝ 3 հատ, Հ-30 ավտոճանապարհի վրա՝ 15 հատ: Երկաթգծի վրա գտնվում է 67 հատ կամուրջ:

4.4 Մարզի տարածքում գործում է հատուկ և կարևորագույն նշանակության 139 կազմակերպություն, որոնցից ռազմավարական նշանակություն ունեն «Սևանի ՀԷԿ» մեծ, «Գրիգոր Թադևոսյան կվարց», «Անի», «Սեկտոր քվանտ» ՍՊԸ-ների և «Ձորագյուղ 1» փոքր հիդրոէլեկտրակայանները, 5 էլեկտրաբաշխիչ կազմակերպություններ, 5 կապի հանգույցներ, գազա և ջրամատակարարման համակարգերը, Սոտքի ոսկու հանքը, Սևանի երկաթուղային կայանը: Նշվածից բացի, ռազմավարական նշանակություն ունեցող կազմակերպություններ են նաև պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները:

Մարզի էլեկտրամատակարարման համակարգում կա 5 բաշխիչ ենթակայան, բարձր լարման 220կվ՝ 62կմ, 110կվ՝ 180կմ, 35կվ՝ 395կմ էլեկտրագծեր:

Մարզի տարածքով անցնում է Սևան-Գավառ- Մարտունի-Վարդենիս-Ջերմուկ և Տավուշի մարզ-Ձորավանք-Ճամբարակ մայրուղային գազատարերը:

Մարզի ջրամատակարարման համակարգում առկա է 41 ջրամբար, ինչպես նաև Գավառ-Սևան մայրուղային ջրագիծը:

4.5 Մարզի տարածքում գործող վտանգավոր օբյեկտ է՝ ՀՀ առողջապահության նախարարության «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ Մարտունի քաղաքի մասնաճյուղը, որտեղ կարող են պահպանվել ուսումնասիրության համար վերցված վարակակիր փորձանմուշներ:

4.6 Մարզում վտանգավոր հիդրոտեխնիկական կառույցներ են՝ իրարից մոտ 4կմ հեռավորության վրա գտնվող, «Գեղարքունիք 2» (ջրատարողությունը՝ 320000 մ^3) և «Լանջաղբյուր 2» (300000մ^3) արհեստական պատվարով ջրամբարները որոնք ջրով լցված են լինում հունիսի կեսերից մինչև օգոստոս:

4.7 Մարզում առկա է սողանքի վտանգ, որը ընդգրկում է Ճամբարակ, Այգուտ, Դպրաբակ, Կալավան, Ձորավանք, գ.Մարտունի համայնքների շուրջ 120 հա տարածք:

4.8 Քարաթափումների վտանգ առկա է մարզի 58 համայնքներում, որոնցից առավել վտանգավոր են 11 համայնքների քարաթափումների տեղամասերը՝ ինչը սպառնում է հարակից 334 շինությունների:

4.9 Սելավային հոսքեր, ուժեղ քամիներ, կարկտահարություններ, ձնաբուք, ցրտահարություն հնարավոր են մարզի ամբողջ տարարածքում:

4.10 Հրդեհապայթյունավտանգ օբյեկտներ են Մարզում գործող 10 բենզալցակայանները, 35 ճնշումային գազալցակայանները:

Մարզում գործում է 3 բարձրագույն, 12 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, 119 հանրակրթական դպրոց, 1 հատուկ դպրոց, 46 մանկապարտեզ:

4.11 Մարզում գործում են 7 ստացիոնար հիվանդանոց և 35 ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ: Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 288 հատ: Մարզի բուժհիմնարկները լրացուցիչ կարող են ծավալել 680 մահճակալ: Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 366 մարդ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 1800 մարդ: Մարզում առկա է 48 սանիտարական ավտոմեքենա:

Մարզի բուժհիմնարկների բազայի վրա ստեղծված են թվով 116 բժշկական կազմավորումներ 451 մարդ անձնակազմով:

4.12 Մարզում առկա է 23 սննդային պահեստ՝ 42000մ^3 ընդհանուր ծավալով և 38 իրային պահեստ՝ 67000 մ^3 ընդհանուր ծավալով, որոնք պահպանվել են Խորհրդային տնտեսության ձեռնարկություններից և ներկայումս հիմնականում չեն գործում:

4.13 Մարզում առկա է պատմամշակութային արժեք ներկայացնող՝ Գավառի երկրագիտական թանգարանը, Գավառի պատկերասրահը, բազմաթիվ եկեղեցիներ, մատուռներ և պատմական այլ կառույցներ, որոնցից առանձնանում են Գավառի և Վարդենիսի եկեղեցիները, Սևանավանք և Հայրավանք համալիրները, Նորատուսի խաչքարերը և այլն:

5. ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ

5.1 ՀՀ առողջապահության նախարարության «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» ՊՈԱԿ Մարտունի քաղաքի մասնաճյուղի շենքի վնասման և, պահպանվող վարակակիր փորձանմուշների տարածման պատճառով՝ կարող են առաջանալ համաճարակների ծագման աղբյուրներ՝ ինչի հավանականությունը փոքր է:

Մարզում քիմիական, ճառագայթային նյութերի վտանգավոր քանակություններ օգտագործող կազմակերպություններ չկան:

ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում Մարզը չի գտնվում անմիջական վտանգի գոտում ուստի բնակչության պաշտպանության միջոցառումներ չեն նախատեսվում:

5.2 Մարզում անասնապահությունը և գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը զարգացած է տարածքով հավասարապես, ուստի տարբեր անասնահամաճարակներ և էպիֆիտոտիկ վտանգավոր իրավիճակներ հնարավոր են Մարզի ամբողջ տարածքում:

5.3 Հայաստանում երկրաշարժերի առավել հավանական էպիկենտրոններ են համարվում՝

ա. Գառնի՝ λ=44^0 80′, φ=40^{0}10′, M=7.0, H=15 կմ (10-11 բալ),

բ. Սպիտակ՝ λ=44^0 23′, φ=40^{0}92′, M=7.1, H=15 կմ (9-10 բալ),

գ. Զանգեզուր՝ λ=46^0 00′, φ=39^{0}20′, M=6.3, H=22 կմ (8-9 բալ):

«Գառնի» էպիկենտրոնով երկրաշարժի 8 բալանոց գոտում են գտնվում Գավառ, Սևան, Նորաշեն, Չկալովկա, Ծաղկաշեն, Ծաղկունք, Լճափ, Վարսեր, Գեղամավան, Գեղարքունիք, Ծովազարդ, Սարուխան, Լանջաղբյուր, Դդմաշեն, Գանձակ, Լճաշեն, բնակավայրերը, 7 բալանոց գոտում՝ Կալավան, Բարեպատ, Ձորավանք, Բերդկունք, Անտառամեջ, Սեմյոնովկա, Ծովագյուղ, Լեռնահովիտ, Նորատուս, Գեղհովիտ, Լիճք, Ն.Գետաշեն, Մարտունի, Երանոս, Կարմիր, Վ.Գետաշեն, Մադինա, Վաղաշեն Հայրավանք, Ծովասար, Ծակքար, Վարդաձոր, Ձորագյուղ բնակավայրերը:

«Սպիտակ» էպիկենտրոնով երկրաշարժի 7.5 բալանոց գոտում են գտնվում Լճաշեն, Անտառամեջ, Դդմաշեն, Սեմյոնովկա, Ծովագյուղ, Գեղամավան, Գագարին, Վարսեր, Սևան, Ծաղկունք բնակավայրերը: 7.0 բալանոց գոտում են գտնվում Ձորավանք, Ճամբարակ, Բերդկունք, Նորաշեն, Կարմիրգյուղ, Գանձակ, Ծաղկաշեն, Սարուխան, Լանջաղբյուր, Ծովազարդ, Լճափ, Հայրավանք, Նորատուս, Գավառ, Ջիվիխլու, Կալավան, Դրախտիկ,

Մարտունի, Գետիկ, Վահան, Աղբերք, Շորժա, Արտանիշ, Այգուտ, Դպրաբակ, Բարեպատ, Չկալովկա, Թթուջուր բնակավայրերը:

Երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կարող են ստեղծել լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիներ: Առավել ծանր իրավիճակ կստեղծվի մարզի սողանքավտանգ գոտիներում (Ճամբարակ, Ձորավանք, Դպրաբակ, գ. Մարտունի, Այգուտ, Կալավան համայնքներ): ՈՒժեղ երկրաշարժի հետևանքով կարող են վթարվել մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարները («Գեղարքունիք 1», «Լանջաղբյուր 2» ջրամբարներ), որի հետևանքով 6 բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման գոտում: Վտանգավոր իրավիճակ կարող է ստեղծվել 45 պայթյունավտանգ և հրդեհապայթյունավտանգ օբյեկտների հարակից տարածքներում:

«Զանգեզուր» էպիկենտրոնով երկրաշարժի դեպքում Մարզը հիմնականում չի տուժի:

5.4 Մարզում հրդեհապայթունավտանգ օբյեկտներում (ճնշումային գազալցակայաններ, բենզալցակայաններ) աշխատակիցների թիվը 2-ից 10 մարդ է: Օբյեկտները մոտակա շինություններից գտնվում են բավարար հեռավորության վրա, և վթարի հետևանքով հարվածային ալիքի կամ ջերմային հարվածի ազդեցության կարող են ենթարկվել օբյեկտի աշխատակիցները և լիցքավորվող մեքենաների վարորդները՝ առավելագույնը 20 մարդ:

5.5 Մարզում կա արհեստական պատվարով 2 ջրամբար «Գեղարքունիք» 2, որի տարողությունը 320000մ^3 է, պատվարի բարձրությունը 9մ, երկարությունը 20մ, հայելու մակերեսը կազմում է 6,0հա, նախագծային սեսմակայունությունը 11 բալ, ծովի մակարդակից գտնվում է 2500մետր բարձրության վրա և «Լանջաղբյուր 2», որի տարողությունը 300000մ^3 է, պատվարի բարձրությունը 7մ, երկարությունը 16մ, հայելու մակերեսը կազմում է 8,4հա, նախագծային սեսմակայունությունը 11 բալ, ծովի մակարդակից գտնվում է 2500մետր բարձրության վրա:

5.6 Հեղեղումները հիմնականում առաջանում են գարնանային ձնհալքի ժամանակ՝ ապրիլ – հունիս ամիսներին և ընդգրկում են, ինչպես մարզի խոշոր գետերի այնպես էլ սելավատարերի հարակից տարածքները՝

- Գավառագետը, որի ջրի միջին մակարդակը կազմում է 70սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 200սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Գեղարքունիք, Լանջաղբյուր, Սարուխան, Գանձակ, Կարմիրգյուղ, Նորատուս, Ծաղկաշեն և Գավառ համայնքները:
- Արգիճին, որի ջրի միջին մակարդակը կազմում է 50սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 170սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Մադինա, Լեռնհովիտ և Ն. Գետաշեն համայնքները:
- Մարտունի գետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 50սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 160սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Մարտունի, Գեղհովիտ համայնքները:
- Մասրիկ գետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 40սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 130սմ, վտանգավոր է Մ. Մասրիկ համայնքի համար:
- Ձկնագետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 50սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 170սմ, վտանգավոր է Ծովագյուղ համայնքի համար:
- Գետիկ գետ, որի ջրի միջին մակարդակը կազմում է 40սմ, գարնանային վարարումների ժամանակ առավելագույն մակարդակը 150սմ, վտանգավոր /խոցելի/ հատվածներն են Ձորավանք, Դպրաբակ, Այգուտ, Մարտունի, Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ համայնքները:

5.7 Մարզում սողանքավտանգ տարածքները գտնվում են Գետիկ գետի ձախ ափի երկայնքով ձգվող շուրջ 20կմ երկարությամբ և 100-500մ լայնությամբ հատվածում, որը ընդգրկում է Ճամբարակ, Այգուտ, Դպրաբակ, Կալավան, Ձորավանք, գ.Մարտունի, համայնքների շուրջ 120 հա տարածք:

5.8 Քարաթափումների վտանգ առկա է մարզի 58 համայնքներում, որոնցից առավել վտանգավոր են 11 համայնքների քարաթափումների տեղամասերը:

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԻՑ

6.1 Մարզի տարածքին բնորոշ տեխնածին և տարերային տարբեր աղետների հետևանքով ստեղծված իրավիճակը կարող է տարբերվել պայմանավորված պատճառված վնասի չափով, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ ինչպես առանձին

շինության, տեխնիկայի և մարդկանց փոքր խմբի վրա, այնպես էլ Մարզի մոտ 40 բնակավայրերի և մինչև 45000 մարդու վրա:

6.2 Առավել մեծ վնասներ կպատճառվի ուժեղ երկրաշարժի առաջացման դեպքում:

«Սպիտակ» էպիկենտրոնով երկրաշարժի 7.5 բալանոց գոտում գտնվում են 10 բնակավայր՝ 8748 շենքով և 34991 բնակչությամբ, 7.0 բալանոց գոտում՝ 28 բնակավայր՝ 19867 շենքով և 79467 բնակչությամբ: Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կարող են կազմել 15387 մարդ, որոնցից անվերադարձ՝ 5495 մարդ, սանիտարական՝ 9892 մարդ՝ այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 4946 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 2671 մարդ և թեթև վիրավորներ՝ 2275 մարդ: Երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 27478 հատ, որոնցից 1-ին կարգ՝ թեթև վնասվածք կստանա 3572 շինություն, 2-րդ կարգ՝ միջին վնասվածք կստանա 10167 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 9343 շինություն, 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 3572 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 824 շինություն. խոշոր հրդեհներ՝ 107 հատ. խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 58 հատ. փլվածքներով փակված փողոցներ՝ 69 կմ, փլատակների մակերեսը կկազմի 23950 քառ. մ (քաղ. Գավառում՝ 5570, ք.Սևանում 4483), իսկ ծավալը 2127202 խոր. մ (ք. Գավառում՝ 494751 ք.Սևանում 398128): Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 481 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 3365 մարդուց բաղկացած անձնակազմով (ք. Գավառում՝ 112 կազմավորում՝ 783 մարդուց բաղկացած անձնակազմով ք.Սևանում 90 կազմավորում 630 մարդ), 118 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 1770 մարդուց բաղկացած անձնակազմով (ք.Գավառում 22 կազմավորում՝ 330 մարդուց բաղկացած անձնակազմով, ք,Սևանում 18 կազմավորում 270 մարդ), 167 սանիտարական խմբեր՝ 990 մարդուց բաղկացած անձնակազմով, 128 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 65 վթարավերականգնողական խմբեր (ք.Գավառում 15 ք,Սևանում 12), 128 հասարակական կարգի պահպանման ջոկեր (ք.Գավառում 30 ք,Սևանում 24): Անհրաժեշտություն կլինի ընդհանուր թվով 321 միավոր (մղան, էքսկավատոր, ավտոկռունկ) ինժեներական տեխնիկայի (ք.Գավառում 60 ք,Սևանում 75) 210 միավոր ինքնաթափերի (ք.Գավառում 39 ք,Սևանում 48), 96 միավոր կոմպրեսորային կայանների (ք.Գավառում 22 ք,Սևանում 18), 120 միավոր էլեկտրակայանների (ք.Գավառում 26 ք,Սևանում 21):

Մարզում կպակասեն՝ 51 սանիտարական խմբեր, 40 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 120 միավոր ինժեներական տեխնիկայով (մղան, էքսկավատոր, ավտոկռունկ), 116 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 95 հասարակական կարգի պահպանման ջոկեր, 61 միավոր կոմպրեսորային կայաններ, 100 միավոր էլեկտրակայաններ:

6.3 «Գեղարքունիք 2» և «Լանջաղբյուր 2» արհեստական պատվարներով ջրամբարները գտնվում են իրարից 4կմ հեռավորության վրա , և դրանցից յուրաքանչյուրի պատվարի փլուզման դեպքում աղետալի ջրածածկման գոտում կհայտնվեն Գեղարքունիք, Լանջաղբյուր, Գանձակ, Կարմիրգյուղ, ք.Գավառ և Նորատուս համայնքների գետամերձ տարածքները: Կջրածածկվի մոտ 500 հա հողատարածք: Աղետալի ջրածածկման գոտում կհայտնվի մոտ 6500 մարդ և մոտ 4800 գլուխ խոշոր ու 3500 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

6.4 Մարզում գործում են 10 բենզալցակայաններ և 35 ճնշումային գազալցակայաններ, որոնք ունեն 2-10 աշխատող:

Լցակայանները տեղակայված են բնակելի տարածքներից պատշաճ հեռավորության վրա, աշխատանքային ժամերին լցակայաններում մարդկանց /վարորդներ, ուղևորներ, լցակայանի աշխատակիցներ/ առավելագույն թիվը կազմում է 20 մարդ:

Լցակայաններում հրդեհապայթյունավտանգ իրավիճակ ստեղծվելու դեպքում հնարավոր է.

- շենքի կամ առանձին մասերի փլուզում, այրվող օբեկտներին և հրդեհաշիջման նպատակով օգտագործվող ջրաղբյուրներին մոտենալու ճանապարհների խցանում, ներքին և արտաքին ջրացանցերի հրդեհաշիջման ստացիոնար համակարգերի, տեխնոլոգիական սարքավորումների վնասում կամ ոչնչացում,
- հրդեհապայթյունավտանգ օբեկտի վայրում աշխատողների, ինչպես նաև վարորդների և ուղևորների կողմից վնասվածքներ ստանալը բեկորներից, կառուցատարերի կտորներից, պայթյունի ալիքից, ինչպես նաև այրման և պայթյունի թունավոր արգասիքներից:
- ամբարների պատերի պատռվածք, նավթամթերքների եռում և արտանետում.
- ամբարի ծածկի փլուզման հետևանքով գոտիների առաջացում, որոնք կդժվարացնեն կրակմարման նյութերի տալը.
- կրակի արագ տարածում տեխնոլոգիական բաքերով, կոյուղով և այլ համակարգերով.

- այրման արգասիքների և ջերմային հոսքերի ուղղությունների փոփոխություն՝ օդերևութաբանական պայմաններից կախված:

6.5 Հեղեղումները հիմնականում առաջանում են գարնանային ձնհալքի ժամանակ՝ ապրիլ – հունիս ամիսներին և ընդգրկում են, ինչպես մարզի խոշոր գետերի այնպես էլ սելավատարերի հարակից տարածքները, այդպիսով ընդգրկելով գրեթե մարզի ողջ տարածքը: Հեղեղումներ են հնարավոր նաև ամառվա ընթացքում տեղացած ուժեղ անձրևների, կարկուտների հետևանքով:

Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում կտուժեն մոտ 25 համայնքների գետամերձ տարածքները, ջրածածկման գոտում կհայտնվեն բնակելի տարածքներ, մշակովի հողատարածքներ ինպես նաև գյուղատնտեսական կենդանիներ: Կջրածածկվի ավտոճոնապարհներ, կամուրջներ, գազամուղեր և էլ. հաղորդման գծեր:

6.6 Մարզում անտառապատ տարածքները 260կմ^2 է (ցամաքային տարածքի մոտ 6%), որից 140 կմ^2 Գետիկ գետի հովիտի բնական անտառներն են, 120 կմ^2 Սևանա լճի առափնյա տնկովի անտառները:

Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում հիմնականում կվնասվեն ու կոչնչանան մեծաքանակ թվով ծառեր, կվնասվեն ծովափնյա ու անտառամերձ տնակներ: Տորֆահանքերի հրդեհի դեպքում կոչնչան տորֆային պաշարի զգալի քանակություն, առաջացած դատարկություններն էլ փլուզումների պատճառ կդառնան:

6.7 Քարաթափումների վտանգ առկա է մարզի 58 համայնքներում, որոնցից առավել վտանգավոր են 11 համայնքների քարաթափումների տեղամասերը՝ ինչը սպառնում է հարակից 334 շինությունների, 2600մ գումարային երկարությամբ ավտոճանապարհի, էլեկտրագծերի, գազատարերի:

Մարզում սողանքավտանգ տարածքները գտնվում են Գետիկ գետի ձախ ափի երկայնքով ձգվող շուրջ 20կմ երկարությամբ և 100-500մ լայնությամբ հատվածում, որը ընդգրկում է Ճամբարակ, Այգուտ, Դպրաբակ, Կալավան, Ձորավանք, գ.Մարտունի, համայնքների շուրջ 120 հա տարածք: Սողանքը անմիջականորեն սպառնում է 335 բնակարանի 1360 մարդ բնակչությամբ: Սողանքավտանգ հատվածներում կա 520 գլուխ խոշոր և 816 գլուխ մանր եղջերավոր անասուն:

III. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

7. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1 Արտակարգ իրավիճակների դեպքում Մարզում աշխատանքների ընդհանուր ղեկավարումը իրականացվում է Մարզային արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի (այսուհետ՝ ԱԻ հանձնաժողով) կողմից, որի ղեկավարն է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետը (այսուհետ Մարզպետ), տեղակալներն են Մարզպետի հաստիքային տեղակալները և Մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) պետը, անդամներն են՝ Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, վարչությունների պետերը, առանձին բաժինների պետերը, ոստիկանության մարզային վարչության պետը, տարածքային զինվորական կայազորի պետը, կապի ապահովման և էլեկտրաէներգիայի մատակարարման ձեռնարկությունների պատասխանատուները:

7.2 Արտակարգ իրավիճակների ծագման դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները նախապես՝ մինչև մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի նիստի գումարումը, կազմակերպում է ՄՓՎ-ն՝ իր ստորաբաժանումների ուժերով, ընդգրկելով տարածքային զինվորական կայազորի և մարզի առողջապահական հիմնարկների, ոստիկանության, մարզի համայնքների ուժերը և միջոցները.

7.3 ՄՓՎ պետը, ստանալով արտակարգ դեպքի, պատահարի մասին հաղորդագրությունը և այդ մասին զեկուցելով Մարզպետին, աղետի գոտում ծավալում է աղետի հետևանքների վերացման կառավարման կետ, փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների կառավարման կետեր, կապ է հաստատում նրանց, ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) օպերատիվ հերթափոխի պետի, տարածքային զինվորական կայազորի և ոստիկանության օպերատիվ հերթապահների միջև: Այդ կառավարման կետերից իրականացվում է փրկարարական աշխատանքների անմիջական կառավարումը.

7.4 Փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարները նշանակվում են ՄՓՎ անձնակազմից, որոնք ենթարկվում են ՄՓՎ պետին, իսկ մարզի արտակարգ իրավիճակներում գործելու հանձնաժողովի աշխատանքներն սկսվելու պահից՝ հանձնաժողովին.

7.5 ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգչի կողմից արտակարգ իրավիճակի մասին ազդարարվելուց հետո, Մարզի ղեկավար կազմը ներկայանում է Մարզի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովի նիստին:

Մարզի ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովը ղեկավարում և կազմակերպում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը.

7.6 Գործում է Մարզի տարահանման հանձնաժողովը, որի նախագահն է Մարզպետի տեղակալը: Տարահանման հանձնաժողովը ղեկավարում և կազմակերպում է Մարզի տարածքում բոլոր տարահանման միջոցառումները: Տարահանման հանձնաժողովի որոշումով մարզում ծավալվում են տարահանման և ընդունող հավաքակայաններ:

7.7Հանձնաժողովները կառավարումն իրականացնում են ստեղծված կառավարման կենտրոններից (կետերից), իսկ անհրաժեշտության դեպքում՝ շարժական կենտրոններից (կետերից): Մարզի ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովին կից ըստ անհրաժեշտության կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր: Մարզպետը մշտական աշխատավայրը կարող է փոխել միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնեցնելուց հետո:

7.8 Ստանալով Մարզի տարածքում արտակարգ իրավիճակի մասին տեղեկատվությունը ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգչը այն հաղորդում է ՃԿԱԿ, ՄՓՎ պետին և նրա հրահանգով կազմակերպում է ՄՓՎ անձնակազմի հավաք: ՄՓՎ պետը իրավիճակի մասին զեկուցում է Մարզպետին, և նրա հրահանգով՝ ՄՓՎ կողմից կազմակերպվում է Մարզի ղեկավար կազմի, ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովի անդամների, համայնքների ղեկավարների և տարահանման հանձնաժողովի նախագահի ազդարարումը՝ համագործակցելով մարզի տարածքում հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերությունների հետ: Ազդարարման համակարգի խափանման դեպքում մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների միջոցով, իսկ բնակչության ազդարարումը և վարվելակերպի մասին կանոնները՝ մարզային ոստիկանության շարժական ուժերով ու միջոցներով:

ԱԻ-ում գործող մշտական հանձնաժողովի անդամները և համայնքների ղեկավարները կազմակերպում են ենթակա անձնակազմի ազդարարում և հավաք, ստեղծում են օպերատիվ խմբեր և կազմակերպում դրանց աշխատանքը.

Պլանում ներգրավված մարմինների անձնակազմերից յուրաքանչյուրը, զգալով կամ տեսնելով աղետին բնորոշ երևույթներ հնարավորության դեպքում ներկայանում է իր աշխատավայր առանց ազդարարվելու:

7.9 Բնակչության ազդարարումն իրականացվում է էլ. շչակների միջոցով՝ ձեռքով միացման եղանակով: Ընդամենը մարզում առկա են C-40 տիպի 18 հատ և LD-800 տիպի 23 հատ էլ. շչակ: Էլ. շչակներով ազդարարման վերաբերյալ որոշումն ընդունում է մարզպետը կամ համայնքի ղեկավարը: Շչակային «ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ազդանշանից հետո տեղական հեռուստատեսությամբ, ռադիոցանցի կամ բարձրախոսների միջոցով տրվում է տեքստային հաղորդում արտակարգ իրավիճակի առաջացման կամ սպառնալիքի վերաբերյալ:

7.10 Կապը մարզային փրկարարական վարչության, Մարզի ԱԻ հանձնաժողովի, տարահանման հանձնաժողովի, արձագանքող ուժերի, ՀՀ ԱԻ հանրապետական հանձնաժողովի, ՃԿԱԿ-ի և հարևան մարզերի կառավարման կետերի հետ կազմակերպվում է ֆիքսված , բջջային հեռախոսակապով և ռադիոկապով.

8. ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

8.1 Իրավիճակի մասին տվյալների ժամանակին ստացման և հիմնավորված որոշումներ ընդունելու նպատակով իրականացվում է ընդհանուր և հատուկ հետախուզություն: Հետախուզությունն իրականացվում է սպառնալիքի և նրա հետևանքների վերացման ողջ ընթացքում: Հետախուզության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Մարզպետը

8.2 Ընդհանուր հետախուզությունն իրականացվում է աղետի գոտում իրավիճակի հիմնական տվյալների արագ ստացման, տուժածների հայտնաբերման և նրանց փրկելու հնարավորությունների ճշտման նպատակով: Ընդհանուր հետախուզությունն իրականացվում է ՄՓՎ և համայնքային հետախուզական կազմավորումների ուժերով: Ընդհանուր հետախուզության անմիջական ղեկավարումն իրականացնում է ՄՓՎ-ն

8.3 Հատուկ հետախուզությունն իրականացվում է մասնագիտական տվյալների ստացման նպատակով: Կախված խնդիրների բնույթից կատարվում են հրդեհային, ինժեներական, բժշկական, կոմունալ վթարային, ճառագայթային, քիմիական,

մանրէաբանական, անասնաբուժական և ֆիտոպատոլոգիական հետախուզություններ: Հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն ըստ գործառույթների իրականացնում են մարզի համապատասխան կազմակերպությունների ղեկավարները, իսկ համակարգի գործունեությունը համակարգում է ՄՓՎ-ն

8.4 Հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում է Մարզպետը, ՄՓՎ կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա:

Հետախուզության արդյունքում որոշվում են՝

ա. արտակարգ դեպքի, պատահարի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. Մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով Մարզի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը,

դ. օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ. տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման ձևերը և անվտանգությունն ապահովող միջոցները.

8.5 Հետախուզության տվյալները զեկուցում են կապի միջոցներով՝ նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն, հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես.

Հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են՝ ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է՝ համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի:

8.6 Հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

ա. ՄՓՎ ջրափրկարար ջոկատի և հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը,

բ. Մարզպետարանի ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր և հատուկ հետախուզական ուժերը,

գ. կազմակերպությունների ընդհանուր և հատուկ հետախուզության ուժերը,

դ. ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկները՝

1) պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Մարզի փորձագիտական կենտրոնների լաբորատորիաները,

2) անասնաբուժական սպասարկման մարզային ստորաբաժանումները,

3) մարզային հիդրոօդերևութաբանական ծառայությունը,

4) բույսերի պաշտպանության և կարանտինի մարզային ստորաբաժանումները.

8.7 Հետախուզական ուժերը պատրաստականության են բերվում՝

ա) մշտական պատրաստականության հիմնարկների ուժերը Ժ +60 րոպեում

բ) համայնքների, կազմակերպությունների և ծառայությունների ուժերը Ժ+1,30

. Հետախուզական ուժերի տրանսպորտով և կապի միջոցներով ապահովումը իրականացվում են համապատասխան հիմնարկությունների, կազմակերպությունների կողմից:

9. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

9.1 Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացման վերաբերյալ որոշման ընդունման, ուժերի նախապատրաստման և կիրառման կարգը հետևյալն է՝

. 1) ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ՝ որում նշվում են՝

ա. արտակարգ իրավիճակի բնույթը տարածքը և հետևանքները,

բ. փրկարարական աշխատանքների ծավալը, ներգրավվող ուժերի և միջոցների քանակը ըստ համայնքների և փրկարարական աշխատանքների տեղամասերի,

գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

ե. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,

զ. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

է. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

ը. կառավարման կազմակերպման կարգը.

9.2 Մարզի և օգնության ժամանած փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Ընդգրկում են՝

ա. ՄՓՎ ստորաբաժանումների 2/3-ը (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ. Տարածքային զինվորական կայազորի ու Հայաստանի Հանրապետության ոստիկանության Մարզային վարչության ուժերը, ինչպես նաև աղետի գոտում պահպանված ուժերը.

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար: Ընդգրկում է Մարզի մշտական պատրաստականության ուժերը՝ Մարզի փրկարարական համալիր ջոկատը և վթարավերականգնողական խմբերը.

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար: Ընդգրկում է երկրորդ էշելոնում չընդգրկված Մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությանը: Փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների ստեղծման ժամանակ

պահպանվում են նրանց չմասնատելու սկզբունքները՝ գլխավոր խնդրի իրականացման համար, հաշվի առնելով բնակավայրերի ավերվածության աստիճանը և նրանցում բնակչության թիվը (խտությունը): Ուժերի տեղակայման վայր ընտրելիս՝ հաշվի են առնվում հիգիենիկ-համաճարակային իրավիճակը, գերակշռող քամիների ուղղությունը, ճանապարհների առկայությունը, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելիս կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումն առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ՝ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

9.3 Փրկարարական ուժերի համար (նաև՝ միջազգային) արտակարգ իրավիճակի գոտուց դուրս նշանակվում են հավաքման վայրեր, և ապահովվում են արագ ու հարմար ելքեր դեպի աշխատանքային տեղամասեր: Հավաքման վայրերի կոնկրետ տեղերը որոշվում են հետախուզության տվյալների հիման վրա:

10. ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Արտակարգ իրավիճակներում, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի Մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների հետ փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են համաձայն փոխգործողությունների պլանի, որով կարգավորվում են տեղեկատվության փոխանակման, հասարակական կարգի պահպանությանը ներգրավման, պարետային ծառայության, ինչպես նաև փրկարարական աշխատանքներում ներգրավման և ինժեներատեխնիկական միջոցների կիրառման հարցերը:

Հարևան մարզերի հետ փոխգործողություններ են իրականացվում տեղեկատվության փոխանակման և արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ ուժերի ու միջոցների փոխադարձ տրամադրման ուղղությամբ:

Փրկարարական և տուժածների կենսապահովման աշխատանքներում փոխգործողություն կազմակերպվում է Մարզում գործող հասարակական կազմակերպությունների հետ կամավորների ներգրավման և նյութատեխնիկական աջակցության ուղղությամբ:

IV. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

11. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

11.1 Ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված փրկարարական ուժերի և միջոցների առաջանցման հիմնական և շրջանցիկ ուղիների ապահովմանը, արտակարգ իրավիճակների տարածքներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների ինժեներատեխնիկական միջոցներով ապահովմանը, վնասված կամուրջների, շինությունների վտանգավորության աստիճանի որոշմանը: Մարզում արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման համար պատասխանատու են Մարզպետարանի քաղաքաշինության վարչությունն ու տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, որոնք իրենց գործառույթներն իրականացնում են Մարզի համայնքների համապատասխան բաժինների հետ համատեղ: Մարզում երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման խնդիրներն են՝

1) ինժեներական հետախուզության կազմակերպումը, արդյունքների վերլուծումը և գնահատումը, անհրաժեշտ փրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

2) փողոցների, ճանապարհների անցանելիության ապահովման միջոցառումների իրականացումը.

3) բնակչությանը տեղափոխելու, տարահանման ուղիների անցանելիության ապահովումը.

4) փրկարարական ուժերի՝ վնասված օջախներին մոտեցման ապահովումը.

5) կառավարման կետերի նախապատրաստումը և համապատասխան գույքով հագեցումը.

6) փրկարարական աշխատանքների ինժեներատեխնիկական միջոցներով ապահովումը.

7) վնասված կամուրջների, շինությունների ուսումնասիրությունը.

Արտակարգ իրավիճակի հետևանքների վերացման ինժեներական ապահովումն իրականացվում է Մարզի տարածքի շինարարական, ճանապարհաշինական, շինարարանախագծային կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ուժերով և միջոցներով:

12. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

12.1 Բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը, վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման կանխարգելմանը, շրջակա միջավայրի (մթնոլորտի, ջրային ռեսուրսների, հողի, ընդերքի), ինչպես նաև սննդամթերքի և խմելու ջրի հիգիենիկ և համաճարակաբանական (այդ թվում՝ լաբորատոր) հսկողության կազմակերպմանը:

12 .2 Բժշկական ապահովումը կազմակերպում է Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության բաժինը: Բժշկական ապահովման միջոցառումները իրականացվում են Մարզի բուժհաստատությունների ուժերով և միջոցներով, իսկ դրանց չբավարարելու դեպքում համապատասխան հայտերի հիման վրա ուժեր և միջոցներ են ներգրավվում հանրապետության այլ տարածքներից և արտերկրից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջոցով: Բժշկական ապահովման միջոցառումների իրականացմանը հնարավոր է նաև առողջապահական և այլ ուսումնական հաստատությունների սովորողների մասնակցությունը:

Մարզում գործում են 7 ստացիոնար հիվանդանոց և 35 ամբուլատոր- պոլիկլինիկական հիմնարկներ: Մարզում առկա ընդհանուր մահճակալների քանակը կազմում է 288 հատ: Մարզի բուժհիմնարկները լրացուցիչ կարող են ծավալել 680 մահճակալ: Մարզում բժիշկների ընդհանուր թիվը կազմում է 366 մարդ, իսկ միջին բուժանձնակազմինը՝ 1800 մարդ: Մարզի բուժհիմնարկների բազայի վրա ստեղծված են թվով 116 բժշկական կազմավորումներ 451 մարդ անձնակազմով:

Տուժածների և բուժանձնակազմի տեղափոխումը իրականացվում է Մարզում առկա է 24 սանիտարական ավտոմեքենայով, և ըստ անհրաժեշտության այդ նպատակով ներգրավված լրացուցիչ ավտոտեխնիկայով:

12.3 Արտակարգ իրավիճակներում տուժածների հիմնական զանգվածը նախնական բժշկական օգնություն ստանալուց հետո տարահանվում է անվտանգ տարածքներ:

Տարահանման միջոցառումների սանիտարական ապահովումը իրականացվում է մարզի բժշկական կազմավորումների ուժերով, յուրաքանչյուր շարասյան համար մեկ բրիգադի տրամադրմամբ:

12.4 Սննդի և խմելու ջրի նկատմամբ սանիտարական հսկողությունը իրականացվում է Մարզի հակահամաճարակային կայանների ուժերով: Բնակչության շրջանում համաճարակների բացառման նպատակով նրանց կողմից սահմանվում է անընդհատ հսկողություն և իրականացվում են պրոֆիլակտիկ միջոցառումներ:

12.5 Բնակչությանը հոգեբանական օգնության ցուցաբերման նպատակով կազմակերպվում է համապատասխան մասնագետների աշխատանքը աղետի գոտում, զանգվածային լրատվամիջոցներով պատրաստվում և պարբերաբար հեռարձակվում են համապատասխան հաղորդումներ:

13. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

13.1 Հասարակական կարգի պահպանությունը ընդգրկում է հետևյալ միջոցառումները.

ա) համայնքներում, կազմակերպություններում, տարահանման հավաքակայաններում ու տրանսպորտային մայրուղիներում հսկողության ուժեղացումը՝ իրավախախտումները բացառելու նպատակով,

բ) բնակչության տարահանման, տուժածների տեղափոխման, ուժերի տեղաշարժման երթուղիներում անվտանգ երթևեկության ապահովումը,

գ) կառավարման կետերի, կարևորագույն օբյեկտների և նյութական արժեքների պահպանությունը՝ համաձայն նախորոք կազմված ցանկերի,

դ) հսկողությունը սահմանված կարանտինային և այլ ռեժիմների պահպանման ուղղությամբ,

ե) տարահանված բնակավայրերում, աղետի գոտիներում պարեկային ծառայության իրականացումը,

զ) աղետի գոտիներում մասսայական անկարգությունների և խուճապի դրսևորումների կանխումը,

է) մարդկային կորուստների հաշվառումը:

13.2 Հասարակական կարգի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարզային վարչությունը՝ համապատասխան պլանով, որը ստեղծված իրավիճակին համապատասխան անմիջապես դրվում է գործողության մեջ: Ծագող լրացուցիչ հարցերը լուծվում են՝ համաձայն ՄՓՎ և Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարզային վարչության միջև փոխգործողությունների պլանի, անհրաժեշտության դեպքում ներգրավելով ուժեր Հայաստանի Հանրապետության զինված ուժերից:

14. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

14.1 Մարզում, արտակարգ իրավիճակներում տրանսպորտային ապահովումը կազմակերպում և իրականացնում է Մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, որն այդ նպատակով հաշվառում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝

ա. վտանգավոր տարածքներից բնակչության և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար,

բ. փրկարարական ուժերի տեղափոխման համար,

գ. տուժածների փոխադրման համար,

դ. ծառայություններին և կազմակերպություններին՝ իրենց առջև դրված խնդիրների կատարման տրանսպորտային ապահովման համար:

Տրանսպորտային և տեխնիկական միջոցների հատկացումն իրականացվում է Մարզպետի որոշմամբ՝ համաձայն ներկայացված հայտերի:

14.2 Տրանսպորտային ապահովման ուժերն ու տեխնիկական միջոցները ներառում են՝ Մարզի տարածքում գործող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինական, վերանորոգման ու այլ կազմակերպությունների, քաղաքների և գյուղական համայնքների, ինչպես նաև մասնավոր անձանց սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային, ճանապարհաշինարարական և վերանորոգման մեքենաներն ու մեխանիզմները, Հայաստանի Հանրապետության երկաթուղային տրանսպորտը և դրանց շահագործողները (վարորդներ, մեխանիզատորներ):

14.3 Աղետի գոտում աշխատող տեխնիկաների վառելիքաքսուքային նյութերով ապահովումը կազմակերպում է Մարզի նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը՝ ստացիոնար և շարժական լիցքավորման կետերի միջոցով: Այդ ծախսերի հաշվառումը իրականացնում է Մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը:

15. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

15.1 Հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից: Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային կանխարգելումը, հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

Մարզի հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության Մարզի ստորաբաժանումը և մարզային փրկարարական վարչությունը: Մարզի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում տեղի հրշեջ-փրկարարական ջոկատների ուժերը կարող են բավարար չլինել, այդ դեպքում հրդեհաշիջմանը ընդգրկվում են նաև հասարակական ուժեր, բնակչությունը, հրշեջ փրկարարական ստորաբաժանումներ հանրապետության այլ տարածքներից՝ համաձայն չվացուցակի :

15.2 Հատուկ, կարևորագույն նշանակության օբյեկտներում հրշեջ կազմավորումների կողմից կազմակերպվում է ուժեղացված ծառայություն, նախապատրաստվում են հակահրդեհային ջրամատակարարման պահեստային աղբյուրները (փակ ջրավազաններ, հրշեջ հիդրանտներ, պիրսեր և այլն), ճշտվում են ջրամատակարարման խնդիրները՝ մարզի կոմունալ-տեխնիկական ծառայության հետ, ըստ համագործակցության պլանի:

Պրոֆիլակտիկ նկատառումներից ելնելով, բնակչությունը տեղեկացվում է արտակարգ իրավիճակում հակահրդեհային լրացուցիչ միջոցառումների մասին, անհրաժեշտության դեպքում պրոֆիլակտիկ խմբի կողմից իրականացվում է բնակչության տարահանում:

Հրդեհաշիջման աշխատանքները կատարվում են հրդեհաշիջման կազմակերպման հրահանգին համապատասխան:

16. ՃԱՌԱԳՅԱԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ, ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ (ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

16.1 Ճառագայթային պաշտպանության կազմակերպման միջոցառումներն են՝

1) բնակչության ազդարարումը.
2) բնակչության պատսպարումը.
3) բնակչության, ընտանի կենդանիների, նյութական արժեքների տարահանումը.
4) վահանաձև գեղձի արգելափակման իրականացումը.
5) ապաակտիվացման (տեղանք, շենքեր և շինություններ, տեխնիկա, նյութական արժեքներ և այլն) աշխատանքների կատարումը.
6) ճառագայթաակտիվ մշտական հսկողության սահմանումը, դիտարկման իրականացումը.
7) մարդկանց և ընտանի կենդանիների սանիտարական մշակումը:

16.2 Վթարաքիմիական վտանգավոր նյութի առաջնային և երկրորդական գոլորշային ամպերի վերացման և վարակազերծման միջոցառումներն են՝

1) վթարաքիմիական վտանգավոր նյութի առաջնային և երկրորդական գոլորշային ամպերի շարժման հակառակ ուղղությամբ ջրային վարագույրի տեղադրումը.
2) թափված վթարա-քիմիական վտանգավոր նյութի չեզոքացումը թմբապատման միջոցով.
3) վթարա-քիմիական վտանգավոր նյութի հեղուկ ֆազի արտահոսքի տեղայնացումը կլանող փոսերի միջոցով.
4) հոսուն սորբենտներով վթարա-քիմիական վտանգավոր նյութի արտահոսքի ծածկումը.
5) արտահոսած վթարա-քիմիական վտանգավոր նյութի տեղայնացումը փրփուրի շերտով, պոլիմերային թաղանթների և լողացող էկրանների միջոցով.
6) վթարա-քիմիական վտանգավոր նյութի արտահոսքի տեղայնացումը չեզոքացնող լուծույթներով և ջրում լուծելով.

7) չեզոքացնող նյութերով և ջրով արտահոսքի վարակազերծումը (չեզոքացումը).

8) վթարա-քիմիական վտանգավոր նյութի արտահոսքի վարակազերծումը (չեզոքացումը) պինդ հոսուն չեզոքացնող նյութերի օգտագործմամբ.

9) վթարա-քիմիական վտանգավոր նյութի արտահոսքի տեղայնացումը (վարակազերծումը) հեղուկ ֆազի պնդեցման միջոցով:

16.2 Քիմիապես վտանգավոր օբյեկտում վթարների հետևանքների վերացման աշխատանքներին մասնակցած ստորաբաժանումները վարակման գոտուց դուրս գալուց անմիջապես հետո ենթարկվում են հատուկ մշակման: Անհրաժեշտության դեպքում կատարվում է նաև անձնակազմի սանիտարական մշակում:

16.3 Ստորաբաժանումների հատուկ մշակման և անձնակազմի սանիտարական մշակման իրականացման համար ծավալվում է հատուկ մշակման շրջան, որը որպես կանոն ծավալվում է չվարակված տարածքում, ստորաբաժանումների վարակման գոտուց դուրս գալու երթուղիների վրա:

16.4 Գազազերծումը (սանիտարական մշակումը) կարող է լինել մասնակի կամ լրիվ: Մասնակի ապաակտիվացում իրականացվում է ժամանակի սղության կամ հնարավորությունների սահմանափակ լինելու դեպքում: Ապաակտվացվում են տեխնիկայի այն հատվածները, որոնք կարող են շփվել մարդկանց մաշկի հետ:

Գազազերծման (սանիտարական մշակման) աշխատանքներն իրականացվում են այնպես, որ չխոչընդոտեն ստորաբաժանումների կողմից խնդիրների կատարման ընթացքին:

16.5 Ուժեղ ներգործող թունավոր նյութերից բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պաշտպանության արդյունավետ կազմակերպման համար իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների ազդարարում.

2) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից պաշտպանվելու վերաբերյալ լրատվամիջոցներով և բարձրախոս սարքերով բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների օպերատիվ տեղեկացում.

3) անհատական պաշտպանության միջոցներով բաշխման իրականացում.

4) արտանետված ուժեղ ներգործող թունավոր նյութերից հավանական ազդեցության գոտում հայտնվող բնակչության և կազմակերպությունների աշխատակիցների պատսպարում ու տարահանման իրականացում:

17. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՒ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

17.1 Մարզի տարածքում տեղեկատվական ապահովման պատասխանատուն՝ Մարզպետարանի լրատվական բաժինն է:

Արտակարգ իրավիճակի վերաբերյալ որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է համապատասխան հաղորդագրություն, որը փոխանցվում է «Բիլայն», «ՎիվաՍել ՄՏՍ» և «Օրանժ» բջջային կապի օպերատորներին (և մարզային կապի հանգույցներին)՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռարձակման հանգույցներով: Անհրաժեշտության դեպքում Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ, Հայաստանի հանրային ռադիոյով և Մարզային լրատվամիջոցներով՝ պարբերաբար հեռարձակվում է հաղորդումներ ստեղծված իրավիճակի, իրականացվող աշխատանքների և ստեղծված իրավիճակում բնակչության ճիշտ վարքականոնների մասին:

17.2 Մարզպետարանի լրատվական բաժինը կազմակերպում է Մարզի պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից օպերատիվ տեղեկատվության տրամադրումը միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնին, ինչպես նաև այդ կենտրոնից ստանում է մարզին առնչվող տեղեկատվություն: Կազմակերպում է տեղական և արտասահմանյան լրագրողների աշխատանքը աղետի գոտում, և ձեռնարկում է միջոցներ սուտ և չճշտված տեղեկությունների թափանցումը լրատվամիջոցներ կանխելու ուղղությամբ:

18. ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

18.1 Արտակարգ իրավիճակներում հիդրոօդերևութաբանական ապահովումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Հայաստանի Հանրապետության հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության

Գավառի, Սևանի, Մարտունու, Վարդենիսի, Ճամբարակի հիդրոօդերևութաբանական կայանները: Հիդրոօդերևութաբանական ապահովումը կազմակերպվում և իրականացվում է արտակարգ իրավիճակներում բնակչության և տարածքների պաշտպանության միջոցառումների ընթացքում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների ազդեցությունը, փաստացի և կանխատեսվող եղանակային պայմանները հաշվի առնելու նպատակով:

18.2 Մարզի հիդրոօդերևութաբանական կայանները ապահովում են.

1) վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների մասին տեղեկատվության տրամադրումը օպերատիվ վերլուծական խմբերին.

2) Մարզի տարածքում փաստացի դիտված հիդրոօդերևութաբանական տվյալների հավաքումը, (անհրաժեշտության դեպքում ներգրավելով շարժական օդերևութաբանական կայաններ, որոնք ապահովում են ոչ միայն օդերևութաբանական տարրերի դիտարկումներ, այլ նաև ռադիացիոն ֆոնի որոշում) մշակումը, ինչպես նաև կանխատեսումների կազմումը, տրամադրումը կառավարման մարմիններին.

3) հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների (հեղեղների, սելավների, հրդեհների և այլ) տարածման շրջաններում հիդրոօդերևութաբանական պայմանների, դրանց հետագա հնարավոր զարգացումների գնահատումը:

18.3 Հիդրոօդերևութաբանական դիտարկումները սովորական պայմաններում իրականացվում են օրական 8 անգամ (3 ժամը մեկ), ռադիացիոն ֆոնի որոշումը՝ օրական մեկ անգամ, իսկ արտակարգ իրավիճակներում՝ ըստ անհրաժեշտության, հաճախականացված ռեժիմով:

19. ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

19.1 Նյութատեխնիկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված փրկարարական ուժերի, միջոցառումների, ինչպես նաև տուժած բնակչությանն անհրաժեշտ նյութական, տեխնիկական միջոցներով և սննդամթերքով ժամանակին ու անխափան մատակարարմանը: Նյութական ապահովման միջոցառումներն ուղղված են նյութական միջոցների արտադրությանը, կուտակմանը, բաշխմանը և նպատակային օգտագործմանը:

Մարզի արտակարգ իրավիճակներում նյութատեխնիկական ապահովման համար պատասխանատու է Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ - տնտեսական վարչության հիման վրա ստեղծված նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը:

19.2 Տեխնիկական ապահովման միջոցառումներն ուղղված են տեխնիկական միջոցների անխափան շահագործմանը, նրանց տեխնիկական սպասարկմանը, բնակչության պաշտպանության միջոցառումներում ներգրավված տեխնիկայի բոլոր տեսակների շահագործմանն ու նորոգմանը, ինչպես նաև վերանորոգման ստորաբաժանումներին պահեստամասերով և շրջանառու միջոցներով ապահովմանը:

Փրկարարական ուժերը ապահովվում են վառելիքաքսուքային նյութերով, ջրով, սննդամթերքով, կապի միջոցներով, շինարարական գործիքներով, սարքավորումներով, և այլ տեսակի նյութական միջոցներով, բժշկական գույքով, հագուստով, հատուկ հանդերձանքով և այլ նյութերով:

Նյութատեխնիկական ապահովման աղբյուրներ են հանդիսանում կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) և անհատ սեփականատերերի տրամադրության տակ գտնվող նյութական արժեքները, պետական պահուստի միջոցները և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրած մարդասիրական օգնությունը:

19.3 Տարահանման հանձնաժողովից ստանալով համապատասխան տվյալներ տարահանվող բնակչության վերաբերյալ, նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը ստեղծում է ժամանակավոր կացարաններին կից շարժական բաշխման կետ: Պետական պահուստից, սննդի և առևտրի խոշոր կազմակերպություններից անհրաժեշտ սննդամթերքը, հագուստը, առաջին անհրաժեշտության ապրանքները ստանալով՝ նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը կազմակերպում է նյութական միջոցների կուտակումը, տեղափոխումը, պահպանումը և բաշխումը համապատասխան ստացիոնար և շարժական կետերում:

Նյութատեխնիկական մատակարարման ծառայությունը կազմակերպում է առաջին անհրաժեշտության պարագաների և սննդամթերքի առևտուրը՝ Մարզում առկա առևտրային ցանցի և շարժական առևտրային կետերի միջոցով:

19.4 Մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը տրամադրում է անհրաժեշտ քանակի բեռնատար, սառնարանային

ավտոտրանսպորտ և ավտոբենզատարեր՝ նյութատեխնիկական մատակարարման ծառայության ներկայացրած հայտերի հիման վրա:

Նյութական միջոցների պահպանությունն իրականացվում է ՀՀ ոստիկանության Մարզի ստորաբաժանումների ուժերով:

Հավելված 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. - ի
N որոշման

<<Հավելված 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 22 - ի
N 96 - Ա որոշման

ՊԼԱՆ

ՀԱԷԿ-Ի ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԵՎ /ԿԱՄ/ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ

1. **Իրավիճակի նկարագրություն**

ՀԱԷԿ-ը գտնվում է Արմավիրի մարզում Գեղարքունիքի մարզից 150կմ հեռավորության վրա: Այն կառուցված է 8 բալանոց սեյսմիկ գոտում, ծովի մակերևույթից 934,5 մետր բարձրության վրա, տեղանքը բլրային է հարակից տարածքով հոսում է Սևջուր գետը:Ամռան ամիսներին ՀԱԷԿ-ի մերձակա տարածքներում քամու հավանական ուղղություններն են՝ հյուսիս-արևելյան 40 և արևելյան՝ 25: ՀԱԷԿ-ը բաղկացած է ВВР-440 տիպի 2 էներգաբլոկից /В-270 ռեակտորով/ յուրաքանչյուրը 440 Մվտ հզորությամբ: Ներկայումս գործում է միայն 1 էներգաբլոկը 390 Մվտ գումարային հզորությամբ:

2. **Եզրակացություններ իրավիճակի գնահատումից**

Մարզը չի գտնվում անմիջական վտանգի գոտում ուստի բնակչության պաշտպանության միջոցառումներ չեն նախատեսվում:

3. **Ներգրավվածությունը ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող միջոցառումներին**

3.1 ՀԱԷԿ-ի վթարի դեպքում ՇՊՄՊ / շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտի/ և ԵՊԳՊ /երկարաժամկետ պաշտպանական գործողությունների պլանավորման գոտի/ գոտիների սահմանագծում ծավալվում են մարդկանց սանիտարական մշակման տեխնիկայի հատուկ մշակման, հսկիչ անցագրային, բժշկական և աշխատանքների համակարգման թվով 11 կետեր:

3.2 Գեղարքունիքի ՄՓՎ անձնակազմից թիվ 6 աշխատանքների համակարգման կետում /Գ. Հայկավան/ ընդգրկվում է 1 հիմնական և 2 պահեստային խումբ:

- հիմնական խումբ՝
ա/ ՄՓՎ պետ,
բ/ ՄՓՎ պետի տեղակալ՝
գ/ ՄՓՎ ՃԿԿ ավագ հրահանգիչ
- 1-ին պահեստային խումբ՝
ա/ Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար,
բ/ ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ հրահանգիչ,
գ/Գավառի հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար,
- 2-րդ պահեստային խումբ՝
ա/ Սևանի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար,
բ/ ՄՓՎ ՃԿԿ ՕՀՀ հրահանգիչ,
գ/ Սևանի հրշեջ փրկարարական ջոկատի օղակի հրամանատար,

3.3 ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը ՃԿԱԿ-ից ստանալով ՀԱԷԿ-ի վթարի մասին տեղեկատվություն «Ատոմ-1»,«Ատոմ-2»,«Ատոմ-3», «Ատոմ-4», «Ատոմ-5», «Ատոմ-6», «Ատոմ-7» և «Ատոմ-8» ծածկագրերի տեսքով այն փոխանցում է

ա/ Մարզպետին,

բ/ ՄՓՎ պետին,

գ/ ՄՓՎ փրկարարական և հրշեջ փրկարարական ջոկատների հրամանատարներին,

դ/ ՔՊ ծառայությունների պետերին,

ե/ Մարզի տարածքում տեղակայված զորամասերի հրամանատարությանը

զ/ ՀՀ ոստիկանության մարզային վարչությանը

է/ Ազգային անվտանգության ծառայության մարզային վարչությանը

ը/ Մարզային օդերևութաբանակն ծառայությանը,

3.4 ՄՓՎ ջրափրկարարական և հրշեջ-փրկարարական ջոկատների հրամանատարներն իրականացնում են անձնակազմի ազդարարում և հավաք, համակարգող խմբերը մեկնում են համակարգման կետեր:

3.5 Աշխատանքների համակարգման կետերը չմեկնող անձնակազմը, մնալով հիմնական տեղակայման վայրերում տեղեկացվում է ստացված իրավիճակի մասին, շարունակում է ծառայությունը, իրականացնում է միջոցառումների պլաններով նախատեսված միջոցառումները, ստանում, մշակում և համապատասխան մարմիններին է ներկայացնում համակարգող խմբերից ստացված տեղեկատվությունը, հրահանգավորում է և գտնվում պատրաստ վիճակում անհրաժեշտության դեպքում աղետի գոտի մեկնելու համար:

3.6 Բնակչության պաշտպանության միջոցառումների ընթացքում կապը կազմակերպվում է գերկարճալիք և կարճալիք ռադիոցանցի ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցով: Կապը փրկարարական ուժերի վարչության և ստորաբաժանումների միջև իրականացվում է ավտոմեքենաներում տեղադրված ռադիոկայանների ինչպես նաև բջջային, քաղաքային և ուղիղ հեռախոսակապի միջոցով:

3.7 Մեկ աշխատանքային գործունեության համար անձնակազմը պետք է ապահովվի C տիպի պաշտպանիչ կոստյումներով, կամ L-1 թեթև կոստյումներով կամ ՕԶԿ-ով, կամ էլ ֆիլտրող հագուստով և շնչադիմակով: Աղտոտված գոտուց դուրս գալուց անմիջապես հետո անհատական պաշտպանության միջոցները ուղարկվում են սանիտարական մշակման:

3.8 Մինչև աղտոտված գոտի մեկնելը խմբերի հրամանատարները ստանում և խմբերի անդամներին են փոխանցում նշված անհատական պաշտպանության միջոցները, անհրաժեշտ քանակության կայուն յոդի հաբերը՝ ճառագայթաակտիվ յոդից վահանաձև գեղձի պաշտպանություն իրականացնելու համար: Յուրաքանչյուր խումբ մինչև գոտի մեկնելը ապահովվում է անհատական դոզաչափերով, եթե խմբի անդամները աշխատում են կենտրոնացված ապա անհատական դոզաչափ տրվում է միայն խմբի հրամանատարին: Եթե խմբի անդամները աշխատում են ցրված ապա անհատական դոզաչափ տրվում է խմբի յուրաքանչյուր անդամին:

3.9 Աղտոտված գոտում խմբերի գտնվելու ժամանակահատվածը պայմանավորված է կատարվող աշխատանքների ֆիզիկական ծանրաբեռնվածության, օդի ջերմաստիճանի և աղտոտված գոտու էկսպոզիցիոն ճառագայթային ֆոնի մակարդակով:

4. Փոխհամագործակցություն

Փոխգործողությունները իրականացվում են ծառայությունների միջև՝ յուրաքանչյուրի առջև դրված խնդիրների ճշգրիտ ու անվերապահ կատարմամբ, և ստեղծված իրավիճակի վերաբերյալ ձեռք բերված տեղեկատվության՝ ըստ առնչության, միմյանց փոխանցմամբ:

ՀԱՇՎԱՐԿ
ՄՓՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԿԵՏԵՐ ՄԵԿՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ

Հ Հ	Ստորաբաժանման անվանումը	Մեքենայի մակնիշը և տեսակը	Շարժման երթուղին	Նշումներ
1	Գեղարքունիքի ՄՓՎ	Նիվա 21214 360VV01	Գավառ-Հրազդան-Աշտարակ-Բաղրամյան-Հայկավան	
2	Գավառի ՀՓՋ	Զիլ 130ԱԲ40 63Բ 290 US 31		
3	Սևանի ՀՓՋ	Զիլ 130ԱԲ40 63Բ 302 US 34		

ՔԱՆԱԿ

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ /9 ՄԱՐԴ/ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՅՈՒՆ ՅՈԴԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴՈԶԱՉԱՓԵՐԻ

hh	Պաշտպանության միջոցառումների անվանումը	քանակը
1	170մգ-անոց կայուն յոդի պահանջվող քանակ	9 հատ
2	Անհատական պաշտպանության միջոցներ /C-տեսակի պաշտպանիչ կոստյում կամ L-1 թեթև յոստյում կամ ՕԶԿ կամ ԳՊ հակագազ/	9 հատ
3	LԺ-1 բազմակի օգտագործման կամ ԻԴ-1 տեսակի անհատական դոզաչափեր	9 հատ

Հավելված 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. - ի
N որոշման

<<Հավելված 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թ. մայիսի 22 - ի
N 96 - Ա որոշման

Պ Լ Ա Ն
ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի (այսուհետ՝ Մարզ) բնակչության պաշտպանության կազմակերպման պլանով (այսուհետ՝ Պլան) սահմանվում են Մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և փրկարար ուժերի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը:

2. Պլանում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

1) **ուժեղ երկրաշարժ՝** երկրաշարժ, որի ուժն ըստ մագնիտուդի՝ 5,5-ից բարձր է.

2) **բնակչության պաշտպանություն՝** արտակարգ իրավիճակներում մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, ինչպես նաև քաղաքացիների, պետության և այլ սեփականատերերի ունեցվածքի պահպանության նպատակով իրավական, կազմակերպչական և ինժեներատեխնիկական միջոցառումներ.

3) **սեյսմաշրջանացում՝** տարածքում հնարավոր առավելագույն սեյսմիկ վտանգի տարածքային բաշխման քարտեզագրում.

4) **շենքերի և շինությունների խոցելիության գնահատում՝** շենքերի և շինությունների վարքի կանխատեսում ուժեղ երկրաշարժի դեպքում.

5) **փրկարար ուժեր՝** փրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված համապատասխան տեխնիկական հագեցվածությամբ, մասնագիտացված փրկարարներից բաղկացած կազմավորումներ.

6) **հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտներ՝** պետական և ռազմավարական նշանակություն, բարձր վտանգավորություն ունեցող ու բնակչության կենսագործունեությունն ապահովող օբյեկտներ.

7) **աղետի գոտի՝** արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած տարածք (բնակավայր, օբյեկտ) կամ տարածքի մի մաս.

8) **փրկարարական աշխատանքներ՝** մարդկանց, նյութական և մշակութային արժեքների փրկության նպատակով իրականացվող միջոցառումների համալիր.

9) **անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ՝** առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանն սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաև շենքերի, շինությունների ամրացմանը կամ փլուզմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, բնակչության ու փրկարարների կենսաապահովման առաջնահերթ օբյեկտների ժամանակավոր սխեմաներով վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի սանիտարական մաքրմանը.

10) **տարահանում՝** վտանգավոր տարածքից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխում ու տեղաբաշխում.

11) **տարահանման հանձնաժողով՝** համապատասխան ղեկավարի որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբ, որը կազմակերպում ու ղեկավարվում է տվյալ տարածքի բնակչության և կազմակերպությունների տարահանման միջոցառումները.

12) **վտանգավոր տարածք՝** տեղանք կամ առանձին բնակավայր, օբյեկտ, որտեղ արտակարգ իրավիճակի հետևանքով առաջացել կամ կարող են առաջանալ մարդկանց կյանքի, առողջության և բնականոն կենսագործունեության վրա բացասաբար ազդող գործոններ:

13) **միջգերատեսչական միացյալ լրատվական կենտրոնը (ՄՄԼԿ)**, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում, աղետի դեպքում կազմակերպվող, շահագրգիռ տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված խումբ է:

3. Պլանում ներգրավվում են Մարզում գործող պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները՝

1) Գեղարքունիքի մարզպետարանը՝
   - ա/ Գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,
   - բ/ ֆինանսական և սոցիալ - տնտեսական վարչություն,
   - գ/ Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,
   - դ/ Առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,
   - ե/ Քաղաքաշինության վարչություն,
   - զ/ Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին,
   - ե/ Լրատվական բաժին
2) Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ՝ ՄՓՎ).
3) Գեղարքունիքի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը
4) Մարզի օդերևութաբանական կայաններ
5) Կապի ապահովման ոլորտի տարածքային ձեռնարկությունները
6) Տարածքային զինվորական կայազորը
7) ՀՀ ոստիկանության մարզային վարչությունը,
8) Ազգային անվտանգության մարզային վարչությունը

9) Հայաստանի էլցանցեր տարածքային մասնաճյուղերը,

10) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ տարածքային մասնաճյուղերը,

11) «Հայ Ջրմուղ կոյուղի» ՓԲԸ «Հարավային» մասնաճյուղի տեղամասերը

12) Մարզային հեռուստատեսությունը

13) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումը.

14) Մարզի տեղական ինքնակառավարման մարմինները:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում ուժեղ երկրաշարժի և դրա անմիջական սպառնալիքի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ Մարզում գործող պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործառույթներն են՝

4.1 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գործառույթներն են՝

1) գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. ջրի, օդի, օդի փոշու, մթնոլորտային տեղումների, հողի, բույսերի, կենդանիների քիմիական բաղադրության, առանձին տարրերի իզոտոպային կազմի վերլուծության ապահովումը և մարզում գործող պետական կառավարման տարածքային մարմինների՝ շուրջօրյա տեղեկատվությամբ ապահովումը,

դ. տուժած տարածքներից գյուղատնտեսական կենդանիների, գյուղատնտեսական արտադրանքի դուրս բերման աշխատանքների կազմակերպումը,

ե. սննդամթերքի՝ նաև որպես մարդասիրական օգնություն ներկրվող, որակի և պիտանիության նկատմամբ հսկողության իրականացումը,

զ. գյուղատնտեսական հումքի, սարքավորումների և պարենի, այլ նյութական միջոցների պաշարների ստեղծումն ու պահպանումը,

է. փրկարարական շների մուտքի և ելքի հարցերի կարգավորմանը աջակցելը,

ը. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

2) ֆինանսական և սոցիալ - տնտեսական վարչություն՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. բնակչության պաշտպանության միջոցառումների ֆինանսական ապահովումը,

դ. բնակչության պաշտպանության միջոցառումների ֆինանսավորման հարցերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը,

ե. արտակարգ իրավիճակներում հատուկ նշանակություն ունեցող, այլ ապրանքներ արտադրող և ներմուծող կազմակերպությունների ու անհատ ձեռներեցների հետ նախօրոք կնքված պայմանագրերի համաձայն անհրաժեշտ գնումների իրականացումը,

զ. Մարզում գործող պետական կառավարման տարածքային մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տուժած բնակչության և կազմավորումների անձնակազմերի սննդամթերքով, առաջին անհրաժեշտության ապրանքներով և նյութատեխնիկական միջոցներով ապահովումը,

է. չափագիտական ապահովումը,

ը. մասնակցությունը բնակչության կենսաապահովման աշխատանքներին

թ. արտակարգ իրավիճակի պայմաններում տնտեսության կայուն աշխատանքի ապահովումը,

ժ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը,

3) կրթության, մշակույթի և սպորտի վարչություն՝

ա ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. տուժած բնակավայրերի հանրակրթական դպրոցներից և այլ ուսումնական հաստատություններից մարդկանց տարահանումը, կրթության կազմակերպումը,

դ. մշակութային արժեքների պահպանման և տարահանման միջոցառումների կազմակերպումը,

ե. հետաղետային իրավիճակում, բնակչության ժամանակավոր բնակեցման վայրերում կրթության կզմակերպումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4) առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. տուժած բնակչությանը և հիվանդներին ժամանակին անհրաժեշտ բժշկական օգնության ցուցաբերումը, նրանց տարահանումը բժշկական հաստատություններ և հետագա բուժման կազմակերպումը,

ե. ընդհանուր և մասնագիտացված բժշկական հաստատությունների ցանցի պատրաստության բերումն ու համալրումն անհրաժեշտ բժշկասանիտարական գույքով և դեղորայքով,

զ. երկրաշարժից տուժած տարածքներում սանիտարահամաճարակաբանական միջոցառումների իրականացումը,

է. բնակչության զանգվածային պատվաստման համար նախապատրաստական աշխատանքների իրականացումը,

ը. հակահամաճարակային դիտարկման և լաբորատոր հսկողության կազմակերպումը ջրի նկատմամբ, ինչպես նաև աջակցությունն արտաքին միջավայրի և սննդի նկատմամբ իրականացվող դիտարկմանն ու լաբորատոր հսկողությանը,

թ. կազմավորումների և բուժհիմնարկների՝ անհրաժեշտ բժշկական գույքով և դեղորայքով ապահովումը,

ժ. արտակարգ իրավիճակներում աշխատելու համար բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստումն ու արագ մասնագիտացումը,

ժա. տարահանման բժշկական ապահովումը,

ժբ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման աշխատանքներին,

ժգ. անհրաժեշտության դեպքում սննդամթերքի, այդ թվում որպես մարդասիրական օգնություն ներկրվող, որակի և պիտանիության նկատմամբ հսկողությանն աջակցությունը,

ժդ. որպես մարդասիրական օգնություն ներմուծվող դեղամիջոցների որակի նկատմամբ հսկողության իրականացմանը աջակցելը,

ժե. միջազգային բժշկական ուժերի գործողությունների համակարգումը,

ժզ. տուժած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպումը,

ժէ. անհրաժեշտ դեղամիջոցների պահանջարկի հայտի նախապատրաստումը և ներկայացնելը,

ժը. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

5) քաղաքաշինության վարչություն՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. բնակչության պաշտպանության միջոցառումների ինժեներական ապահովման աշխատանքների կազմակերպումը և իրականացումը,

դ. վթարված ինժեներական կառույցների գնահատումը և վերականգնման կազմակերպումը,

ե. հատուկ հետախուզության իրականացում,

զ. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

6) տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. բնակչության տարահանման, կենսապահովման միջոցառումների, փրկարարական, վթարավերականգնողական աշխատանքների տրանսպորտային ապահովումը

դ. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

7) լրատվական բաժին

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. բնակչության պահելաձևի կարգի և վարքի կանոնների մասին ուսուցանումն ու իրազեկումը,

դ. փրկարարական աշխատանքների ընթացքի և աղետի հետևանքների վերացման վերաբերյալ հաղորդումների, այդ նպատակով մամուլի ասուլիսների կազմակերպումը,

ե. հանրապետական և միջազգային լրատվամիջոցների աշխատանքի կազմակերպումը՝ Մարզի տարածքում,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

4.2 Մարզային փրկարարական վարչության գործառույթներն են՝

ա. Մարզպետին Պլանն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,

բ. Պլանով նախատեսված միջոցառումների իրականացման կազմակերպումը,

գ. փրկարարական, հրդեհաշիջման և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և իրականացումը,

դ. իր ենթակայության ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

ե. բնակչության և կառավարման մարմինների ազդարարումը և իրազեկումը,

զ. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստման և գործունեության աշխատանքների կազմակերպումը,

է. երկրաշարժից տուժած տարածքի հետախուզության կազմակերպումը և համակարգումը,

ը. Պլանում ներգրավված մարմինների հետ համագործակցության իրականացումը՝ բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման և կատարման համար,

թ. բնակչության պաշտպանության հարցերով պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության համակարգումը,

ժ. երկրաշարժի հետևանքով տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով ֆինանսական, պարենային, բժշկական և այլ նյութական պաշարների, ֆոնդերի նախապես ստեղծման համար առաջարկությունների մշակումը և դրանք Մարզպետին ներկայացնելը, ինչպես նաև դրանց կուտակման և հետագա նպատակային օգտագործման հարցերի կարգավորումը,

ժա. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.3 Գեղարքունիքի մարզային հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչությունը՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. հակահրդեհային անվտանգության ապահովումը,

դ. օգտագործվող տեխնիկական միջոցների տեխնիկական անվտանգության ապահովումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.4 Մարզի օդերևութաբանական կայաններ՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ստորաբաժանումների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. անհրաժեշտ տարածքներում եղանակի կանխատեսումը,

դ. օդի որակի դիտակետերի շուրջօրյա աշխատանքի ապահովման կազմակերպումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.5 Կապի ապահովման ոլորտի տարածքային ձեռնարկությունների գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. ազդարարման և բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման կապի ապահովումը,

դ. բնակչության և մարզի ղեկավար կազմի ազդարարման ապահովումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.6 Տարածքային զինվորական կայազորի գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների և փոխգործողությունների պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի ծառայողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. ճանապարհների վնասված և փլուզվածքներով խցանված հատվածներով ու կամուրջներով անցանելիության ապահովումը,

ե. փրկարարական աշխատանքների իրականացման համար ուժերի ու միջոցների տրամադրումը և փրկարարական աշխատանքներին մասնակցությունը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.7 ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության ծառայությունների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. արտակարգ իրավիճակում համայնքներում, պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, ինչպես նաև բնակչության պաշտպանության տեսանկյունից բարձր վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններում, պահպանվող օբյեկտներում, բնակչության տարահանման հավաքակայաններում և տեղաբաշխման վայրերում, փրկարարական ուժերի և միջոցների շարժման երթուղիներում հասարակական կարգի պահպանության կազմակերպումն ու ապահովումը,

ե. պետական սեփականության, բնակչության ունեցվածքի պահպանության կազմակերպումը և իրականացումը,

զ. մասնակցությունը բնակչության ազդարարմանը և իրազեկմանը,

է. մարզում անցագրային ռեժիմի և պարետային ծառայության կազմակերպումն ու իրականացումը,

ը. մարզի ռազմավարական նշանակություն ունեցող և կենսաապահովման կարևորագույն օբյեկտների պահպանության ուժեղացումը,

թ. ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը,

ժ. աղետի հետևանքների վերացման գործում ներգրավված ուժերի և տարահանման անխափան երթևեկության ապահովումը,

ժա. մասնակցությունը փրկարարական աշխատանքներին,

ժբ. մահացածների հաշվառմանն աջակցությունը,

ժգ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.8 Ազգային անվտանգության մարզային վարչության գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. համակարգի աշխատողների պաշտպանության կազմակերպումը,

գ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

դ. պահպանվող օբյեկտների պահպանումը,

ե. ժամանած միջազգային ուժերի նկատմամբ հսկողության իրականացումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ իրավական ակտերով իրեն վերապահված լիազորությունների իրականացումը.

4.9 «Հայաստանի էլ. ցանցեր» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղի տեղամասերի գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. էներգահամակարգի գործունեության կայունության ապահովումը,

դ. հատուկ հետախուզության կազմակերպումը,

ե. էներգահամակարգի անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման կազմակերպումը,

զ. տուժած տարածքների էներգամատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

է. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին,

ը. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.10 «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ տարածքային ԳԳՄ-ների գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. հատուկ հետախուզության կազմակերպումը,

դ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին,

ե. տուժած տարածքների գազամատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.11 «Հայ Ջրմուղ կոյուղի» ՓԲԸ «Հարավային» մասնաճյուղի տեղամասերի գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. հատուկ հետախուզության կազմակերպումը,

դ. մասնակցությունը տարահանված բնակչության կենսաապահովման գործին,

ե. տուժած տարածքների ջրամատակարարման վերականգնումը, աշխատանքային տեղամասերում, առանձին հատվածներում դրանց դադարեցումը կամ վերաթողարկումը,

զ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.12 Մարզային հեռուստատեսության գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. բնակչության պահելաձևի կարգի և վարքի կանոնների մասին ուսուցանումն ու իրազեկումը,

դ. փրկարարական աշխատանքների ընթացքի և աղետի հետևանքների վերացման վերաբերյալ հաղորդումների հեռարձակումը,

ե. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը,

4.13 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի մարզային ստորաբաժանումների գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի ճշգրտումը և պլանով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. իր ենթակայության կազմակերպությունների կայուն գործունեության կազմակերպումը,

գ. համապատասխան կառավարման մարմիններին՝ քարտեզագրական նյութերի և անշարժ գույքի միավորի կադաստրային տվյալների տրամադրումը,

դ. վթարված ինժեներական կառույցների գնահատումը և վերականգնման կազմակերպումը,

ե. մասնակցությունը հատուկ հետախուզության իրականացմանը,

զ. ժամանած միջազգային ուժերին՝ տեղանքի քարտեզների և պլանների տրամադրումը,

է. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը.

4.14 Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին առաջարկվող գործառույթներն են՝

ա. ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանների ճշգրտումը և պլաններով նախատեսված միջոցառումների կատարումը,

բ. միջոցառումների իրականացումը՝ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով,

գ. արտակարգ իրավիճակների պայմաններում համայնքների բնակչության վարվելակերպի, բնակչության կողմից անհատական պաշտպանության պարզագույն միջոցների պատրաստման ուսուցման կազմակերպումը,

դ. բնակչության պաշտպանության միջոցառումների համար նախատեսված ինժեներական, տրանսպորտային և այլ նյութատեխնիկական միջոցների նախապատրաստումը,

ե. համայնքի բնակչության, գյուղատնտեսական կենդանիների, նյութական և մշակութային արժեքների, գյուղատնտեսական կենդանիների ու ապրանքների տարահանման, բնակչության՝ ժամանակավոր կացարաններով և առաջին անհրաժեշտության միջոցներով ապահովումը,

զ. մարզային փրկարարական վարչության հետ մայրուղիների և ճանապարհների օգտագործման կարգի համաձայնեցումը,

է. կառավարման, կապի և ազդարարման համակարգերի նախապատրաստումն ու համայնքի բնակչության ազդարարումը,

ը. համայնքի տարածքում ընդհանուր հետախուզության իրականացումը

թ. կազմակերպությունների և բնակչության ներգրավումը բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման գործում,

ժ. բնակչության զանգվածային պատվաստման նախապատրաստումը՝ համաճարակաբանական մարմինների ցուցումներին համապատասխան,

ժա. մահացածների հուղարկավորության իրականացումը,

ժբ. բնակչության պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

5. Պլանի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը:

II. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելքում և սահմանակից է՝ հյուսիսից Տավուշի, արևմուտքից Կոտայքի և Արարատի, հարավից Վայոց Ձորի մարզերին, արևելքից Ադրբեջանի հանրապետությանը: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ- արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից-արևելք՝ 85 կմ: Մարզն իր մեջ ընդգրկում է Գավառի, Ճամբարակի, Մարտունու, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները, մարզկենտրոնն է՝ Գավառ քաղաքը: Մարզի տարածքը կազմում է 5348 քառ. կմ, որից գյուղատնտեսության համար պիտանի հողատարածությունը կազմում է 240,033 հազ. հեկտար: Մարզը՝ ըստ տարածքի, ամենախոշորն է հանրապետությունում, և զբաղեցնում է ՀՀ տարածքի 18 տոկոսը: Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք 86 գյուղական բնակավայրեր: Մարզում բնակվում է 264 200 մարդ, որոնց մեծ

մասը՝ 176200 գյուղական բնակավայրերում: Բնակչության խտությունը կազմում է 49,3 մարդ /1 ք.կմ/:

Մարզի կլիման բնորոշվում է երկարատև և խստաշունչ ձմեռներով, քանի որ մեծամասամբ գտնվում է ծովի մակերևույթից 2000մ և ավելի բարձրության վրա, ամառվա միջին ջերմաստիճանը՝ +20 - +25C°, ձմեռվանը՝ -15 - -25C^0:

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է /1325մ/, ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը /3598մ/: Գեղարքունիքի մարզում է գտնվում բարձր լեռնային /բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1898մ/ Սևանա լիճը, որի ավազանի ընդհանուր մակերեսը կազմում է 5000 քառ. կմ, լճի հայելու մակերեսը 1,2 հազ. քառ. կմ, ծավալը՝ 35,8 մլդ. խմ:

7. Մարզի տարածքն աչքի է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով, որի բարձրությունները տատանվում են ծովի մակերևույթից 1325 - 3598 մետրի սահմաններում: Արաբական և Եվրասիական սալերի բախմամբ պայմանավորված՝ առանձնահատուկ ֆիզիկաերկրաբանական պայմանները, ինչպես նաև լեռնային ռելիեֆն ու կտրուկ մայրցամաքային կլիման նախասահմանել են մարզի տարածքում բնական վտանգների բազում տեսակներ, որոնցից առավել վտանգավորներից է՝ երկրաշարժը: Մարզի տարածքն ամբողջությամբ սեյսմավտանգ է (գտնվում է 6-8 բալ ուժգնությամբ սեյսմիկ գոտում և պարբերաբար ենթարկվում է երկրաշարժերի ազդեցությանը), բնութագրվում է բնական վտանգավոր երևույթներով ու գործընթացներով (սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրածածկումներ և այլն):

8. Սեյսմատեկտոնական պայմանները բնութագրվում են ժամանակակից ակտիվ բեկվածքների և երկրաշարժերի օջախների առկայությամբ, որոնց համալիր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս որոշելու տվյալ տարածքի պոտենցիալ սեյսմիկ վտանգի և սեյսմիկ ռիսկի մեծությունները: Տարածքը հատվում է բազմաթիվ սեյսմաակտիվ բեկվածքներով, որոնց համադրվում են տարբեր ուժգնության (այդ թվում՝ ավերիչ) երկրաշարժերի օջախները: Բարձր սեյսմիկ պոտենցիալ ունի Ազատ-Սևանի բեկվածքը, ինչով պայմանավորված է տարածաշրջանի բարձր պոտենցիալ ունեցող սեյսմիկ վտանգը:

Հայաստանում երկրաշարժերի առավել հավանական էպիկենտրոններ են համարվում՝

ա. Գառնի՝ λ=44^{0}80′, φ=40^{0}10′, M=7.0, H=15 կմ (10-11 բալ),

բ. Սպիտակ՝ λ=44^{0}23′, φ=40^{0}92′, M=7.1, H=15 կմ (9-10 բալ),

գ. Զանգեզուր՝ λ=46^{0}00′, φ=39^{0}20′, M=6.3, H=22 կմ (8-9 բալ):

9. «Գառնի» էպիկենտրոնով երկրաշարժի 8 բալանոց գոտում են գտնվում Գավառ, Սևան, Նորաշեն, Չկալովկա, Ծաղկաշեն, Ծաղկունք, Լճափ, Վարսեր, Գեղամավան, Գեղարքունիք, Ծովազարդ, Սարուխան, Լանջաղբյուր, Դդմաշեն, Գանձակ, Լճաշեն, բնակավայրերը, 7 բալանոց գոտում՝ Կալավան, Բարեպատ, Ձորավանք, Բերդկունք, Անտառամեջ, Սեմյոնովկա, Ծովագյուղ, Լեռնահովիտ, Նորատուս, Գեղհովիտ, Լիճք,

Ն.Գետաշեն, Մարտունի, Երանոս, Կարմիր, Վ.Գետաշեն, Մադինա, Վաղաշեն Հայրավանք, Ծովասար, Ծակքար, Վարդաձոր, Ձորագյուղ բնակավայրերը:

«Գառնի» էպիկենտրոնով երկրաշարժի 8 բալանոց գոտում գտնվում են մարզի 16 բնակավայր՝ 20407 շենքով և 81630 բնակչությամբ, 7 բալանոց գոտում՝ 23 բնակավայր՝ 17794 շենքով և 71176 բնակչությամբ: 8-7 բալանոց ավերիչ երկրաշարժի ազդեցության գոտում կհայտնվեն 11346 շենքեր և շինություններ որոնցում բնակվում է 45400 մարդ: Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 7270 մարդ, որոնցից անվերադարձ՝ 4203 մարդ, սանիտարական՝ 3067 մարդ՝ այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 1538 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 904 մարդ և թեթև վիրավորներ՝ 625 մարդ: Երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 11346 հատ, որոնցից 1-ին կարգ՝ թեթև վնասվածք կստանա 86 շինություն, 2-րդ կարգ՝ միջին վնասվածք կստանա 1087 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 1020 շինություն, 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 3414 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 5739 շինություն. խոշոր հրդեհներ՝ 10 հատ. խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 38 հատ. փլվածքներով փակված փողոցներ՝ 73 կմ, փլատակների մակերեսը կկազմի 173664 քառ. մ (քաղ. Գավառում՝ 50304, ք.Սևանում 40480), իսկ ծավալը՝ 14787625 խոր. մ (ք. Գավառում՝ 4284475 ք.Սևանում 3447730): Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 714 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 5000 մարդուց բաղկացած անձնակազմով (ք. Գավառում՝ 208 կազմավորում՝ 1459 մարդուց բաղկացած անձնակազմով ք.Սևանում 167 կազմավորում 1174 մարդ), 151 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 1059 մարդուց բաղկացած անձնակազմով (ք.Գավառում 41 կազմավորում՝ 288 մարդուց բաղկացած անձնակազմով, ք.Սևանում 33 կազմավորում 232 մարդ), 14 սանիտարական խմբեր՝ 86 մարդուց բաղկացած անձնակազմով, 10 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 29 վթարավերականգնողական խմբեր (ք.Գավառում 9 ք,Սևանում 8), 48 հասարակական կարգի պահպանման ջոկեր (ք.Գավառում 16 ք,Սևանում 13): Անհրաժեշտություն կլինի ընդհանուր թվով 168 միավոր (մղան, էքսկավատոր, ավտոկռունկ) ինժեներական տեխնիկայի (ք.Գավառում 41 ք,Սևանում 33) 110 միավոր ինքնաթափերի (ք.Գավառում 28 ք,Սևանում 23), 48 միավոր կոմպրեսորային կայանների (ք.Գավառում 13 ք,Սևանում 10), 76 միավոր էլեկտրակայանների (ք.Գավառում 13 ք,Սևանում 10):

10. «Սպիտակ» էպիկենտրոնով երկրաշարժի 7.5 բալանոց գոտում են գտնվում Լճաշեն, Անտառամեջ, Դդմաշեն, Սեմյոնովկա, Ծովագյուղ, Գեղամավան, Գագարին, Վարսեր, Սևան, Ծաղկունք բնակավայրերը: 7.0 բալանոց գոտում են գտնվում Ձորավանք, Ճամբարակ, Բերդկունք, Նորաշեն, Կարմիրգյուղ, Գանձակ, Ծաղկաշեն, Սարուխան, Լանջաղբյուր, Ծովազարդ, Լճափ, Հայրավանք, Նորատուս, Գավառ, Ջիվիխլու, Կալավան, Դրախտիկ, Մարտունի, Գետիկ, Վահան, Աղբերք, Շորժա, Արտանիշ, Այգուտ, Դպրաբակ, Բարեպատ, Չկալովկա, Թթուջուր բնակավայրերը:

«Սպիտակ» էպիկենտրոնով երկրաշարժի 7.5 բալանոց գոտում գտնվում են 10 բնակավայր՝ 8748 շենքով և 34991 բնակչությամբ, 7.0 բալանոց գոտում՝ 28 բնակավայր՝ 19867 շենքով և 79467 բնակչությամբ: Բնակչության շրջանում ընդհանուր կորուստները կկազմեն 15387 մարդ, որոնցից անվերադարձ՝ 5495 մարդ, սանիտարական՝ 9892 մարդ՝ այդ թվում՝ ծանր վիրավորներ՝ 4946 մարդ, միջին ծանրության վիրավորներ՝ 2671 մարդ և թեթև վիրավորներ՝ 2275 մարդ: Երկրաշարժի հետևանքով կստեղծվի հետևյալ ինժեներական իրավիճակը՝ վնասված շենքեր՝ 27478 հատ, որոնցից 1-ին կարգ՝ թեթև վնասվածք կստանա 3572 շինություն, 2-րդ կարգ՝ միջին վնասվածք կստանա 10167 շինություն, 3-րդ կարգ՝ ծանր վնասվածք կստանա 9343 շինություն, 4-րդ կարգ՝ մասամբ կքանդվի 3572 շինություն, 5-րդ կարգ՝ լրիվ կփլվի 824 շինություն. խոշոր հրդեհներ՝ 107 հատ. խոշոր վթարներ կոմունալ - էներգետիկ ցանցում՝ 58 հատ. փլվածքներով փակված փողոցներ՝ 69 կմ, փլատակների մակերեսը կկազմի 23950 քառ. մ (քաղ. Գավառում՝ 5570, ք.Սևանում 4483), իսկ ծավալը 2127202 խոր. մ (ք. Գավառում՝ 494751 ք.Սևանում 398128): Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման համար կպահանջվեն 481 ձեռքով աշխատող փրկարարական խմբեր՝ 3365 մարդուց բաղկացած անձնակազմով (ք. Գավառում՝ 112 կազմավորում՝ 783 մարդուց բաղկացած անձնակազմով ք.Սևանում 90 կազմավորում 630 մարդ), 118 մեխանիզացված փրկարարական խմբեր՝ 1770 մարդուց բաղկացած անձնակազմով (ք.Գավառում 22 կազմավորում՝ 330 մարդուց բաղկացած անձնակազմով, ք,Սևանում 18 կազմավորում 270 մարդ), 167 սանիտարական խմբեր՝ 990 մարդուց բաղկացած անձնակազմով, 128 հրդեհաշիջման մարտական հաշվարկներ, 65 վթարավերականգնողական խմբեր (ք.Գավառում 15 ք,Սևանում 12), 128 հասարակական կարգի պահպանման ջոկեր (ք.Գավառում 30 ք,Սևանում 24): Անհրաժեշտություն կլինի ընդհանուր թվով 321 միավոր (մղան, էքսկավատոր, ավտոկռունկ) ինժեներական տեխնիկայի (ք.Գավառում 60 ք,Սևանում 75) 210 միավոր ինքնաթափերի (ք.Գավառում 39 ք,Սևանում 48), 96 միավոր կոմպրեսորային կայանների (ք.Գավառում 22 ք,Սևանում 18), 120 միավոր էլեկտրակայանների (ք.Գավառում 26 ք,Սևանում 21):

11. Երկրաշարժի հետևանքով հնարավոր են բազմաթիվ երկրորդական վտանգավոր երևույթներ՝ փլուզումների, սողանքների, սելավների տեսքով, որոնք իրենց հերթին կարող են ստեղծել լրացուցիչ բազմաթիվ խոցող գործոններ: Կավերվեն և կվնասվեն ճանապարհային շինություններն ու կառույցները, կխցանվեն ավտոմայրուղիներ: Առավել ծանր իրավիճակ կստեղծվի մարզի սողանքավտանգ գոտիներում /Ճամբարակ, Ձորավանք, Դպրաբակ, գ. Մարտունի, Այգուտ, Կալավան համայնքներ/: ՈՒժեղ երկրաշարժի հետևանքով կարող են վթարվել մարզի հիդրոտեխնիկական կառույցների պատվարները /Գեղարքունիք 2, Լանջաղբյուր 1 ջրամբարներ/, որի հետևանքով բազմաթիվ բնակավայրեր կհայտնվեն ջրածածկման գոտում /շուրջ 5000 մարդ/: Վտանգավոր իրավիճակ կարող է ստեղծվել 45 պայթյունավտանգ և հրդեհապայթյունավտանգ օբյեկտների հարակից տարածքներում:

12. «Զանգեզուր» էպիկենտրոնով երկրաշարժի դեպքում Մարզը հիմնականում չի տուժի:

Մարզում կկազմակերպվի տուժած շրջաններից 4000 բնակչի ընդունումը և ժամանակավոր կացարաններով ապահովումը: Մարզից՝ որպես օգնության ուժեր, երկրաշարժից տուժած շրջաններ կմեկնեն 616 կազմավորում 3368 մարդ անձնակազմով և 288 միավոր տեխնիկայով, 116 բժշկական բրիգադներ 451 մարդ անձնակազմով:

Որպես ուժերի մուտքի հիմնական երթուղի ծառայում է Մարտունի – Սելիմի լեռնանցք – Գետափ ավտոճանապարհը, պահեստային երթուղի՝ Սևան – Երևան – Արարատ – Եղեգնաձոր ավտոճանապարհը:

III. ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԾԱԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

13. Կառավարման կազմակերպումը՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումները նախապես՝ մինչև մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի նիստի գումարումը, կազմակերպում է մարզային փրկարարական վարչությունը (այսուհետ ՄՓՎ)՝ իր ստորաբաժանումների ուժերով ընդգրկելով տարածքային զինվորական կայազորի և մարզի առողջապահական հիմնարկների, ոստիկանության, մարզի համայնքների ուժերը և միջոցները.

2) ՄՓՎ պետը, ստանալով ուժեղ երկրաշարժի մասին հաղորդագրությունը, աղետի գոտում ծավալում է աղետի հետևանքների վերացման կառավարման կետ, փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների կառավարման կետեր, կապ է հաստատում նրանց, ՀՀ ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի (այսուհետ՝ ՃԿԱԿ) հերթապահ ուժերի ղեկավարի, տարածքային զինվորական կայազորի և ոստիկանության օպերատիվ հերթապահների միջև: Այդ կառավարման կետերից իրականացվում է փրկարարական աշխատանքների անմիջական կառավարումը.

3) փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարները նշանակվում են ՄՓՎ անձնակազմից, ովքեր ենթարկվում են ՄՓՎ պետին, իսկ մարզի արտակարգ իրավիճակներում գործելու հանձնաժողովի աշխատանքներն սկսվելու պահից՝ հանձնաժողովին.

4) ՄՓՎ կրտսեր հրահանգչի կողմից ուժեղ երկրաշարժի մասին ազդարարվելուց հետո մարզի ղեկավար կազմը ներկայանում է մարզի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովի նիստին, և հանձնաժողովը սկսում է աշխատանքը: Արտակարգ իրավիճակներում մշտական գործող մարզային հանձնաժողովը ղեկավարում և կազմակերպում է բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման ամբողջ գործընթացը.

5) Գործում է մարզի տարահանման հանձնաժողովը, որի նախագահն է մարզպետի տեղակալը: Տարահանման հանձնաժողովը ղեկավարում և կազմակերպում է մարզի տարածքում ուժեղ երկրաշարժի դեպքում բոլոր տարահանման միջոցառումները: Տարահանման հանձնաժողովի որոշումով մարզում ստեղծվում են տարահանման և ընդունող հավաքակայաններ:

6) Հանձնաժողովները կառավարումն իրականացնում են ստեղծված կառավարման կենտրոններից (կետերից), իսկ անհրաժեշտության դեպքում՝ շարժական կենտրոններից (կետերից).

7) Մարզպետը մշտական աշխատավայրը կարող է փոխել միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ համաձայնեցնելուց հետո.

8) Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին կից ստեղծվում են՝

ա. նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովող խմբեր,

բ. միջազգային մարդասիրական օգնությունն ընդունող-բաշխող խմբեր,

գ. վրանային ավանների ծավալման խմբեր :

14. Ազդարարման կազմակերպումը՝

1) Ստանալով մարզի տարածքում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժի մասին տեղեկատվությունը ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը այն հաղորդում է ՀՀ ԱԻՆ ՃԿԱԿ, և նրանց միջոցով ստանում է ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ծառայության դիտարկման տվյալները, ինչի մասին զեկուցում է ՄՓՎ պետին և նրա հրահանգով իրականացնում է ՄՓՎ անձնակազմի հավաք: ՄՓՎ պետը իրավիճակի մասին զեկուցում է Մարզպետին,

2) Մարզպետի հրահանգով՝ ՄՓՎ կողմից իրականացվում է մարզի ղեկավար կազմի, արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի անդամների, համայնքների ղեկավարների և տարահանման հանձնաժողովի նախագահի ազդարարումը՝ համագործակցելով «Արմենտել» ՀՁ մարզային ստորաբաժանումների հետ: Ազդարարման համակարգի խափանման դեպքում մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է սուրհանդակների միջոցով, իսկ բնակչության ազդարարումը և վարվելակերպի մասին կանոնները՝ մարզային ոստիկանության շարժական ուժերով ու միջոցներով.

3) արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի անդամները և համայնքների ղեկավարները կազմակերպում են ենթակա անձնակազմի ազդարարում և հավաքը, ստեղծում են օպերատիվ խմբեր և կազմակերպում դրանց աշխատանքը.

4) պլանում ներգրավված մարմինների անձնակազմերից յուրաքանչյուրը, զգալով երկրաշարժին բնորոշ ցնցումներ կամ տեսնելով փլուզումներ, հնարավորության դեպքում ներկայանում է իր աշխատավայր՝ առանց ազդարարվելու.

15. Կապի կազմակերպումը՝

1) Հայաստանի Հանրապետության վարչապետի և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի կառավարման կենտրոնից քաղաքային ու միջքաղաքային հեռախոսակապի միջոցով կապ է կազմակերպվում

Հայաստանի Հանրապետության մարզպետների, Երևանի քաղաքապետի, լիազոր մարմնի, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովի ղեկավարի պահեստային, Հայաստանի Հանրապետության կառավարման հանրապետական մարմինների, Երևան քաղաքի արտակարգ իրավիճակների հանձնաժողովների և տարահանման հանրապետական հանձնաժողովի կառավարման կետերի հետ: Կարճալիք N 1 ռադիոցանցի միջոցով կապ է կազմակերպվում Հայաստանի Հանրապետության վարչապետի կառավարման կետի և Հայաստանի Հանրապետության մարզպետների, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի շարժական կառավարման կետերի հետ: Նույն ռադիոցանցում լիազոր մարմնի կառավարման կետը կապ է կազմակերպում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի և ՓԾ-ի տնօրենի շարժական կառավարման կետերի հետ.

2) ՃԿԱԿ-ի և ՓԾ մարզային փրկարարական վարչությունների միջև կապը կազմակերպվում է կարճալիք N 2 ռադիոցանցով: Քաղաքային, միջքաղաքային, կապուղիների և ուղիղ հեռախոսակապով կապը կազմակերպվում է ՃԿԱԿ-ի, մարզային փրկարարական վարչությունների, ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալության հերթապահ մասի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի կապի հանգույցի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հակաօդային պաշտպանության և ավիացիայի միացյալ հրամանատարական կետի, Հայկական ատոմային էլեկտրակայանի դիսպետչերական կետի միջև:

3) կարճալիք N 3 և գերկարճալիք N 3 ռադիոցանցերով կապ է կազմակերպվում Մարզի արտակարգ իրավիճակներում մշտական գործող հանձնաժողովի, մարզային փրկարարական վարչության, փրկարարական աշխատանքների տեղամասերի ղեկավարների և հասարակական փրկարարական ուժերի միջև: Գերկարճալիք N 4 ռադիոցանցով կապը կազմակերպվում է Մարզի մշտական գործող հանձնաժողովների, Մարզի տարահանման հանձնաժողովի, համայնքային և կազմակերպությունների արտակարգ իրավիճակների հանձնաժողովների միջև: Մարզային կառավարման կետերի միջև կապը կազմակերպվում է նաև քաղաքային և միջքաղաքային հեռախոսակապի միջոցով.

16. Երկրաշարժի գոտում հետախուզության կազմակերպումը՝

1) հետախուզության կազմակերպումը Մարզի բնակչության պաշտպանության համակարգում ընդգրկված մարմինների ղեկավարների կարևորագույն պարտականությունն է.

2) հետախուզության անմիջական կազմակերպիչներ են ՄՓՎ-ն և Մարզի ղեկավար կազմը

3) Մարզի ղեկավար կազմը կազմակերպում է հատուկ հետախուզություն՝ ելնելով բնակչության պաշտպանության համակարգի ընդհանուր խնդիրներից, ինչպես նաև՝ իր շահերից.

4) հետախուզության նպատակը, հիմնական ուղղությունները, ներգրավվող ուժերն ու միջոցները որոշում է ՄՓՎ-ն.

5) հատուկ հետախուզության անմիջական ղեկավարումն իրականացնում է Մարզպետը.

6) ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկների ընդհանուր ղեկավարումն իրականացնում է ՄՓՎ-ն: Համակարգի անմիջական ղեկավարումը, ըստ գործառույթների, իրականացնում են համապատասխան տարածքային ստորաբաժանումների պետերը.

7) Մարզի տարածքում հետախուզությունը ղեկավարվում է ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգչի միջոցով .

8) հետախուզություն իրականացնող բոլոր ուժերի փոխգործողությունները կազմակերպվում են՝ ըստ խնդիրների, ուղղությունների, օբյեկտների, ժամանակի և գործողությունների տեսակների: Հետախուզական ուժերի համագործակցությունը իրականացվում է՝ համաձայն նախապես մշակված փոխգործողությունների պլանի.

9) իրադրության վերաբերյալ ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են համապատասխան ղեկավարներին՝ համաձայն կառավարման սխեմայի.

10) հետախուզական տվյալները զեկուցում են կապի միջոցներով, ինչպես նաև նախապես մշակված զեկույցների հաշվետախտակի համաձայն.

11) հետախուզության այն տվյալները, որոնք պահանջում են շտապ որոշման ընդունում, զեկուցվում են անմիջապես.

12) հետախուզական ուժերը պատրաստականության են բերվում Ժ +1.30.

13) հետախուզական ուժերի կազմի մեջ մտնում են՝

ա. ՄՓՎ հրշեջ փրկարարական ջոկատների հետախուզական խմբերը,

բ. Մարզպետարանի ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ հետախուզական ուժերը,

գ. կազմակերպությունների ընդհանուր և հատուկ հետախուզության ուժերը,

դ. ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկները.

դ1 պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Մարզի փորձագիտական կենտրոնների լաբորատորիաները,

դ2 անասնաբուժական սպասարկման մարզային ստորաբաժանումները,

դ3 մարզային հիդրոօդերևութաբանական ծառայությունը,

դ4 բույսերի կարանտինի և պաշտպանության մարզային ստորաբաժանումները.

17. Բնակչության՝ կացարաններով ապահովումը և տարահանման կազմակերպումը՝

1) ուժեղ երկրաշարժի դեպքում, ելնելով երկրաշարժի ուժգնությունից և հիմք ընդունելով ավերվածությունների և մարդկային կորուստների հաշվարկները, մարզի 264200 բնակչությունից հնարավոր է անվերադարձ կորուստներ՝ 5495 մարդ, և սանիտարական կորուստներ՝ 9892 մարդ.

2) նկատի ունենալով այն հանգամանքը, որ հնարավոր է բնակելի շենքերի, առանձնատների, կառույցների ու շինությունների հիմնական մասի լրիվ կամ մասնակի ավերում, մարզում 90129 մարդ կմնա անօթևան: Անօթևան մնացած բնակչությունը կացարաններով ապահովվում է հետևյալ ձևերով՝

ա. ապակենտրոնացված տեղաբաշխում,

բ. տեղավորում ճամբարներում,

գ. կոլեկտիվ տեղավորում.

Ապակենտրոնացված տեղաբաշխման դեպքում անօթևան բնակչությանը տեղավորում են բնակվելու համար պիտանի տներում՝ իրենց սեփական տներում, համատեղ կամ առանձին:

Ճամբարներում տեղավորման դեպքում անօթևան բնակչությանը տեղավորում են վրաններում՝ հիմնելով վրանային ճամբարներ.

Կոլեկտիվ տեղավորումը իրականացվում է անօթևան բնակչությանն ավերածությունների գոտուց դուրս գտնվող հասարակական շենքերում տեղավորման միջոցով, որի համար նախատեսվում է ավերված գոտիներից բնակչության տարահանում անվտանգ տարածքներ:

6) Մարզի անօթևան բնակչության՝ կացարաններով ապահովումը և տարահանումը կազմակերպվում են ըստ համայնքների: Յուրաքանչյուր համայնքում ստեղծվում են բնակչության տարահանման հավաքակայաններ, որտեղից բնակչությունը տեղափոխվում է ընդունող բնակավայր:

IV. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

18. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացման վերաբերյալ որոշման ընդունման, ուժերի նախապատրաստման և կիրառման կարգը հետևյալն է՝

1) երկրաշարժի գոտու հետախուզական տվյալները հավաքվում և վերլուծվում են ՄՓՎ աշխատանքային խմբում՝ Մարզպետարանի ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ.

2) վերլուծության արդյունքում որոշվում են՝

ա. երկրաշարժի հետևանքների ծավալները,

բ. փրկարարական աշխատանքների բնույթը, ծավալը և անցկացման հաջորդականությունը,

գ. Մարզի փրկարարական ուժերի կազմը, վիճակն ու փրկարարական աշխատանքների կատարման հնարավորությունը և այդ նպատակով Մարզի վթարավերականգնողական ուժերի ու բնակչության ներգրավման անհրաժեշտությունը,

դ. օգնության կարգով հատկացվող ուժերի ու միջոցների օգտագործման անհրաժեշտությունը, քանակը և ներգրավման վայրը,

զ. տեղանքի բնույթը, ճանապարհների վիճակը, տարվա ժամանակն ու եղանակը և այդ գործոնների ազդեցությունն ուժերի գործողությունների վրա,

է. աղետի գոտի ուժերի մուտքի առավել նպատակահարմար ուղղությունները,

ը. աշխատանքների կատարման ձևերը և անվտանգությունն ապահովող միջոցները.

3) ելնելով իրադրության գնահատման եզրակացություններից՝ Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի նախագահն ընդունում է որոշում աղետի գոտում որոնողափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացման վերաբերյալ՝ որում նշվում են՝

ա. երկրաշարժի տարածքը և հետևանքները,

բ. փրկարարական աշխատանքների իրականացման համար ներգրավվող ուժերն ու միջոցները և նրանց խնդիրները,

գ. աշխատանքների կատարման անվտանգության միջոցառումները,

դ. աղետի գոտու տուժածների և բնակչության տարահանման երթուղիները,

ե. ներգրավված ուժերի համագործակցության կարգը և գործողություններն ապահովող միջոցառումները,

զ. պահեստային ուժերի և միջոցների կազմն ու տեղաբաշխումը,

է. փրկարարական աշխատանքների համակողմանի ապահովման կարգը,

ը. կառավարման կազմակերպման կարգը.

4) Փրկարարական ուժերի համար (նաև՝ միջազգային) երկրաշարժի գոտուց դուրս նշանակվում են հավաքման վայրեր, և ապահովվում են արագ ու հարմար ելքեր դեպի աշխատանքային տեղամասեր: Հավաքման վայրերի կոնկրետ տեղերը որոշվում են հետախուզության տվյալների հիման վրա:

V. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Մարզի և օգնության ժամանած փրկարարական, վթարավերականգնողական, հասարակական փրկարարական խմբերի և բնակչության բազայի վրա կազմվում է ուժերի խմբավորում, որը նախատեսված է փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելու համար: Աղետի գոտում փրկարարական աշխատանքներ իրականացնող ուժերն ու միջոցները կազմված են՝

1) առաջին էշելոնից, որը նախատեսված է իրավիճակը բացահայտելու, գնահատելու, փրկարարական աշխատանքներ սկսելու և հետագայում ժամանող ուժերի ներգրավումն ապահովելու համար: Ընդգրկում են՝

ա. ՄՓՎ ստորաբաժանումների 2/3-ը (մնացած ուժերը մնում են հիմնական տեղակայման վայրերում՝ ամենօրյա խնդիրների լուծման համար),

բ. Տարածքային զինվորական կայազորի ու Հայաստանի Հանրապետության ոստիկանության Մարզային վարչության ուժերը ինչպես նաև աղետի գոտում

պահպանված ուժերը.

2) երկրորդ էշելոնից, որը նախատեսված է փրկարարական աշխատանքների ծավալը կտրուկ ընդլայնելու համար: Ընդգրկում է Մարզի մշտական պատրաստականության ուժերը՝ Մարզի փրկարարական համալիր ջոկատը և վթարավերականգնողական խմբերը.

3) երրորդ էշելոնից կամ պահուստից, որը նախատեսված է անսպասելի ծագող խնդիրների լուծման համար: Ընդգրկում է երկրորդ էշելոնում չընդգրկված Մարզային և համայնքային ուժերը, հասարակական փրկարարական խմբերը և ներգրավված բնակչությանը: Փրկարարական աշխատանքների իրականացման նպատակով ուժերի և միջոցների ստեղծման ժամանակ պահպանվում են նրանց չմասնատելու սկզբունքները՝ գլխավոր խնդրի իրականացման համար, հաշվի առնելով բնակավայրերի ավերվածության աստիճանը և նրանցում բնակչության թիվը (խտությունը): Ուժերի տեղակայման վայր ընտրելիս՝ հաշվի են առնվում հիգիենիկ-համաճարակային իրավիճակը, գերակշռող քամիների ուղղությունը, ճանապարհների առկայությունը, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ իրականացնելիս կենտրոնացված ղեկավարությունն իրագործելու հնարավորությունները, նյութատեխնիկական ապահովումը, ուժերի և միջոցների ուղարկումն առաջին հերթին խիտ բնակեցված հատվածներ՝ փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներ կատարելու համար:

20. Աշխատանքային տեղամասերի ղեկավարները մինչև փրկարարական աշխատանքների սկիզբը կազմակերպում են տվյալ աշխատանքային տեղամասում գործող ուժերի համագործակցությունը՝

1) որոշում են աշխատանքների կատարման կարգը և հաջորդականությունը՝ ըստ կատարման ժամանակի.

2) որոշում են ինժեներական տեխնիկայի օգտագործման կարգը՝ աշխատատար աշխատանքներն իրականացնելու ընթացքում.

3) համաձայնեցնում են ըստ կատարման տեղի և ժամանակի ներգրավված ուժերի գործողությունները.

4) որոշում են կառավարման և կապի կազմակերպման կարգը ստորաբաժանումների և կազմավորումների հրամանատարների միջև.

5) հայտ են ներկայացնում արտակարգ իրավիճակների համապատասխան համայնքային հանձնաժողով՝ լրացուցիչ ուժեր հատկացնելու համար: Փրկարարական աշխատանքների կատարման ընթացքում անընդհատ զբաղվում են համագործակցության հարցերով.

6) տեխնիկայի մուտքը երկրաշարժի գոտի նախատեսվում է՝ առաջինը՝ թրթուրավոր տեխնիկայի մուտքը, այնուհետև՝ անվավոր մեքենաների մուտքը.

7) դեպի աշխատանքային տեղամասեր փրկարարական ուժերի մուտքն ապահովելու համար նախատեսվում են փրկարարական ուժերի առաջշարժումը (մուտքն աղետի գոտի) ապահովող խումբ և սանիտարական դրուժինաներ.

8) որպես առանձին միջոցառում՝ հակահրդեհային ապահովումն է, որն իրականացվում է լիազոր մարմնի հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների ուժերով և ներառում է հրդեհների տեղայնացումն ու մարումը, ապահովվում են վառվող, ծխապատ և գազերով

լցված շինություններից մարդկանց փրկումը և տեղափոխումն անվտանգ վայրեր.

9) փրկարարական ուժերի՝ աշխատանքային տեղամասեր ժամանումից հետո, տեղամասերի ղեկավարները միջոցներ են ձեռնարկում փլուզված և այրվող շենքերից ու շինություններից մարդկանց փրկելու, առաջին օգնություն ցուցաբերելու և դաշտային կամ ստացիոնար բուժիմնարկներ տեղափոխելու աշխատանքները կազմակերպելու համար.

10) տուժածներին հայտնաբերելու նպատակով՝ փրկարարական կազմավորումների ղեկավարներն աշխատանքային տեղամասեր են ուղարկում որոնման խմբեր, որոնք մանրակրկիտ զննում են փլուզված շենքերը և կառույցները: Տուժածների տեղերը հայտնաբերելու գործընթացում անհրաժեշտ է օգտագործել տեղի բնակչության կողմից ստացված տեղեկատվությունը և բնակչության ուժերն օգտագործել տուժածներին փլատակների տակից դուրս բերելու համար, քանի որ այդ ժամանակ մեծանում է ձեռքի աշխատանքների ծավալը:

21. Ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, փրկարարական ուժերի և միջոցների առաջանցման հիմնական և շրջանցիկ ուղիների ապահովմանը, երկրաշարժի հետևանքով ավերված տարածքներում փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը: Մարզում երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման համար պատասխանատու են Մարզպետարանի քաղաքաշինության վարչությունն ու տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, որոնք իրենց գործառույթներն իրականացնում են Մարզի համայնքների համապատասխան բաժինների հետ համատեղ: Մարզում երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքների ինժեներական ապահովման խնդիրներն են՝

1) ինժեներական հետախուզության կազմակերպումը, արդյունքների վերլուծումը և գնահատումը, անհրաժեշտ փրկարարական ու վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

2) փողոցների, ճանապարհների անցանելիության ապահովման միջոցառումների իրականացումը.

3) բնակչությանը տեղափոխելու, տարահանման ուղիների անցանելիության ապահովումը.

4) փրկարարական ուժերի՝ վնասված օջախներին մոտեցման ապահովումը.

5) կառավարման կետերի նախապատրաստումը և համապատասխան գույքով հագեցումը.

6) փրկարարական աշխատանքների տեղամասերի լուսավորության ապահովումը գիշերային ժամանակ.

7) վնասված կամուրջների ուսումնասիրությունը և գետանցումների ապահովումը.

8) երկրաշարժի հետևանքների վերացման ինժեներական ապահովումն իրականացվում է Մարզի տարածքի շինարարական կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) ուժերով և միջոցներով:

22. Բժշկական ապահովումն իրականացնում է Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովման վարչությունը: <Գառնի> էպիկենտրոնով ուժեղ երկրաշարժը

կարող է հանգեցնել 3067, <Սպիտակ> էպիկենտրոնով ուժեղ երկրաշարժը 9892 մարդկանց սանիտարական կորստի, շարքից դուրս հանել առողջապահական հիմնարկների՝ ինչպես շենքերը, այնպես էլ՝ բուժանձնակազմին, տուժածների բժշկական ապահովման համար ներգրավվում են հանրապետության բժշկական ուժերը և արտասահմանյան երկրներից՝ որպես հումանիտար օգնություն ստացված բժշկական միջոցները: Երկրաշարժից տուժածների հիմնական զանգվածը նախնական բժշկական օգնություն ստանալուց հետո տարահանվում է անվտանգ տարածքներ: Տարահանման միջոցառումների տրանսպորտային ապահովումը սանիտարական տրանսպորտով իրականացվում է մարզի բժշկական հիմնարկների ուժերով, այլ տրանսպորտային միջոցներով՝ Մարզպետարանի տրանսպորտի և քաղաքաշինության վարչության կողմից: Փրկարարական կազմավորումների բժշկական ապահովումը իրականացվում է երկրաշարժից տուժածներին բժշկական օգնություն ցուցաբերող բրիգադների ուժերով:

23. Հասարակական անվտանգության ապահովումը կազմակերպվում է քաղաքներում և այլ բնակավայրերում, բնակչության տարահանման գոտիներում հասարակական կարգի պահպանության, փրկարար ուժերի մուտքի և տարահանման երթուղիներում ճանապարհային երթևեկության անվտանգության միջոցառումների իրականացման նպատակով, ինչպես նաև՝ աղետի ժամանակ բնակչության կորուստների հաշվառման համար: Հասարակական կարգի ապահովումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարզային վարչությունը՝ համապատասխան պլանով, որն անմիջապես դրվում է գործողության մեջ: Ծագող լրացուցիչ հարցերը լուծվում են՝ համաձայն ՄՓՎ և Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարզային վարչության միջև փոխգործողությունների պլանի: Ուժեղ երկրաշարժի դեպքում, միջոցառումների իրականացման շահերից ելնելով, զինվորական հրամանատարության մարմինների հետ կազմակերպվում է սերտ համագործակցություն՝ հասարակական կարգի պահպանության, պարետային ծառայության, ինչպես նաև փրկարարական աշխատանքների կազմակերպման հարցերով:

24. Նյութատեխնիկական և սննդամթերքի ապահովումը ներառում է աղետի գոտու տուժած բնակչության և փրկարարական ուժերի կենսաապահովման համար սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ժամանակին տեղափոխումը և բաշխումը: Ուժեղ երկրաշարժից հետո սննդի և առաջին անհրաժեշտության միջոցների ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պահուստային ֆոնդից: Նշված արժեքները տեղափոխման, պահեստավորման և նպատակային օգտագործման աշխատանքները կազմակերպում է Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ - տնտեսական վարչությունը, այդ միջոցառումների իրականացման աշխատանքներում ընդգրկվում են ՄՓՎ-ն, Մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը, Առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը, տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, ՀՀ ոստիկանության մարզային վարչությունը, ինչպես նաև ֆիզիկական անձինք և կազմակերպություններ՝ անկախ սեփականության ձևից: Պետական,

հասարակական փրկարարական կազմավորումների կենսաապահովումն իրականացնում են պետական, հասարակական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ ՀՀ ԱԻՆ համակարգի փրկարարական ուժերի կենսաապահովումը՝ ՀՀ ԱԻՆ-ը: Նյութատեխնիկական միջոցներով և սննդամթերքով ապահովման միջոցառումներն իրականացնում են արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի կողմից ստեղծված հատուկ աշխատանքային խմբերը: Աշխատանքային խմբերը պատրաստում են համապատասխան բացթողման ցուցակագրեր, ճշտում փրկարարական ուժերի անձնակազմի թիվը և վերահաշվարկում են նրանց համար պահանջվող նյութատեխնիկական միջոցների հաշվարկները, իրականացնում աղետի գոտի մեկնող փրկարարական ուժերի նյութատեխնիկական միջոցների բացթողումը, ըստ աղետի գոտու բնակավայրերի նյութատեխնիկական միջոցների՝ Մարզպետի անունից հայտ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, ինչպես նաև կազմակերպում են անհրաժեշտ միջոցների բարձման, տեղափոխման, պահեստավորման և բաշխման գործընթացները՝ ըստ բնակավայրերի:

25. Տրանսպորտային ապահովումն իրականացնում է Մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, ինչի համար անհրաժեշտ են հետևյալ տրանսպորտային միջոցները՝

1) մարդատար ավտոմեքենաներ (ավտոբուսներ, միկրոավտոբուսներ), որոնք նախատեսված են փրկարարական կազմավորումներ, համապատասխան մասնագետների խմբեր, միջազգային փրկարարական ուժեր և այլն տեղափոխելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում աղետի գոտի փոքրածավալ նյութատեխնիկական միջոցներ տեղափոխելու, իսկ աղետի գոտուց տուժած բնակչությանը տարահանելու համար.

2) բեռնատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են նյութատեխնիկական, ինչպես նաև առաջին անհրաժեշտության միջոցներ (սննդամթերք, հագուստ և հանդերձանք, վրաններ, անկողնային պարագաներ, ջեռուցման սարքեր, դեղամիջոցներ, տնտեսական իրեր և այլն) աղետի գոտի տեղափոխելու համար.

3) բեռնատար (նավթատար) և ջրատար ավտոմեքենաներ, որոնք նախատեսված են վառելիք և ջուր աղետի գոտի տեղափոխելու, ինչպես նաև գործող տրանսպորտային միջոցների լցավորումն ապահովելու համար.

4) ինժեներական (շինարարական) և հատուկ տեխնիկա, որը նախատեսված է աղետի գոտում համապատասխան աշխատանքներ իրականացնելու համար.

5) Մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի, ինչպես նաև այլ մարմինների կողմից հատկացվող տրանսպորտային միջոցները վառելիքաքսուքային նյութերով ապահովվում են մինչև հավաքակայան դրանք ներկայացնող մարմինների հաշվին, այնուհետև՝ կենտրոնացված կարգով երթուղու վրա և փրկարարական աշխատանքների տեղամասերում ծավալված լցավորման կայաններում: Երկրաշարժի առաջացման մասին ահազանգ ստանալուց հետո Մարզպետարանի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը 1-3.5 ժամվա ընթացքում կազմակերպում է

համապատասխան թվով և տեսակի տրանսպորտային միջոցների պատրաստականությունը: Մեքենաների վարորդների համար դուրս են գրվում ուղերթային թերթիկներ և աղետի գոտի մուտք գործելու համար անցագրեր, իսկ շարասյուների ավագներին տրվում են վարձված միջոցներին վերաբերող համապատասխան փաստաթղթեր: Կազմակերպվում են շարժական լցավորման կետերի աշխատանքները, ստեղծվում են շարժական ավտովերանորոգման կետեր, որոնք հագեցվում են համապատասխան պահեստամասերով և սարքերով: Նշված շարժական ավտովերանորոգման կետերը տեղաբաշխվում են լցավորման կետերի մոտակայքում՝ տեղեկություններ ստանալով լցավորվող կամ ընթացող մեքենաների վարորդներից, անհրաժեշտության դեպքում մեկնում են դեպքի վայր:

26. Երկրաշարժի գոտու և Մարզի սեյսմիկ իրավիճակի հսկողությունը և իրավիճակի մասին տեղեկությունն ապահովում է ՀՀ ԱԻՆ «Սեյսմիկ պաշտպանության ծառայություն» գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն): Այդ նպատակով գործակալությունը՝

1) հսկողության տակ է վերցնում երկրաշարժի գոտու և Մարզի տարածքի ընթացիկ սեյսմիկ իրավիճակը, ավերածությունների բնույթն ու մասշտաբները, և տեղեկությունները տրամադրվում է Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովին ՄՓՎ միջոցով:

2)փրկարարական և վերականգնողական աշխատանքների անվտանգ իրականացման համար Մարզպետարանի քաղաքաշինության վարչության հետ համատեղ կատարում է երկրաշարժի հետևանքով վնասված շենքերի և շինությունների սեյսմակայունության գնահատում.

27. Տեղեկատվական ապահովումը ներառում է՝

1) Մարզի տարածքում տեղեկատվական ապահովման պատասխանատուն՝ Մարզպետարանի լրատվական բաժինն է:

2) երկրաշարժի վերաբերյալ որևէ հրատապ հաղորդագրության դեպքում կազմվում է բնակչության վարքականոնների մասին հաղորդագրություն, որը փոխանցվում է «Բիլայն», «ՎիվաՍել ՄՏՍ» և «Օրանժ» բջջային կապի օպերատորներին (և մարզային կապի հանգույցներին)՝ բաժանորդներին SMS հաղորդագրություններ ուղարկելու համար: Այս հաղորդագրությունները տրվում են նաև տեղական հեռարձակման հանգույցներով: Անհրաժեշտության դեպքում Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ, Հայաստանի հանրային ռադիոյով և Մարզային լրատվամիջոցներով «Հատուկ թողարկում» խորագրի ներքո պարբերաբար հեռարձակվում է տեղեկատվություն բնակչության վարքականոնների, իրավիճակի, հետագա հնարավոր զարգացումների և իրականացվելիք միջոցառումների մասին.

3) Մարզպետարանի լրատվական բաժինը կազմակերպում է Մարզի պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից օպերատիվ տեղեկատվության տրամադրումը ՄՄԼԿ-ին, ինչպես նաև նրանցից ստանում է մարզին առնչվող տեղեկատվություն: Մարզային լրատվամիջոցներով կազմակերպում է հաղորդումներ ստեղծված իրավիճակի և իրականացվող աշխատանքների մասին:

28. Բնակչության կենսաապահովման, տուժածներին օգնություն ցուցաբերելու, փրկարարական աշխատանքների կազմակերպման համար և այդ նպատակով պարենային, բժշկական ու նյութական պաշարների նպատակային օգտագործման կարգն է՝

1) երկրաշարժի ժամանակ լուծվում են բնակչության կենսաապահովման հիմնական խնդիրները՝ բնակչության կյանքին, առողջությանը, աշխատունակությանը և ֆիզիոլոգիական պահանջների ապահովմանն ու պահպանմանը վերաբերող: Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նյութատեխնիկական ապահովումը և ֆինանսավորումն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Այդ նպատակներին ծառայում են նաև առկա և ստեղծվող (ստացվող) նյութական պաշարներն ու հանրապետական, Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների, Մարզի, Մարզի համայնքների, կազմակերպությունների ու մարդասիրական օգնության միջոցները.

2) արտակարգ իրավիճակների համար անհրաժեշտ նյութական պաշարների ու միջոցների ցանկը և ծավալները որոշում են ըստ չափաքանակների, տուժած բնակչության թվի հիման վրա և արտակարգ իրավիճակների դասակարգմանը համապատասխան.

3) պաշարներն ընդգրկում են՝

ա. պետական ռեզերվները, պատասխանատու՝ ԱԻՆ պետական ռեզերվների գործակալություն,

բ. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների օպերատիվ պահուստները, նախատեսված են սահմանափակ թվով բնակչության և լիազոր մարմնի փրկարար ուժերի ապահովման համար,

գ. Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների միջոցները,

դ. կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) պաշարները.

4) նյութական պաշարները և միջոցները պետք է օգտագործվեն առաջնահերթ հետևյալ միջոցառումների իրականացման համար՝ վթարափրկարարական, մարդկանց կյանքի և առողջության անմիջական վտանգի վերացման աշխատանքների, տուժած բնակչության համար ժամանակավոր կացարանների ու սննդի կետերի ծավալման և դրանց գործունեության ապահովման, միանվագ նյութական օգնության ցուցաբերման և այլն.

5) տուժած բնակչության սոցիալական և կենսաապահովման, այդ թվում՝ անօթևան մնացած բնակչության՝ ժամանակավոր կացարաններով ապահովման կազմակերպիչն ու պատասխանատուն Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունն է, իսկ աջակցող ստորաբաժանումները՝, գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունը, ֆինանսական և սոցիալ - տնտեսական վարչությունը, Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժինը, ՀՀ ոստիկանության մարզային վարչությունը.

6) երկրաշարժի դեպքում նյութական պաշարների և միջոցների առաջնահերթ օգտագործման կանոնները սահմանում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների հանրապետական հանձնաժողովը.

7) փրկարարական աշխատանքների և կենսապահովման տարրերով բնակչության ապահովման ավարտից հետո կազմվում է իրականացված միջոցառումների ընթացքում օգտագործված նյութական պաշարների ու միջոցների մասին հաշվետվություն, որի հիման վրա՝ սահմանված կարգով լրացվում են պաշարներն ու միջոցները:

VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՍՏԱՑՄԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

29. Միջազգային փրկարար ուժերի և օգնության ընդունման, ստացման ու բաշխման միջոցառումները բաղկացած են՝

1) միջազգային փրկարար ուժերի ընդունումից.

2) միջազգային փրկարար ուժերի աշխատանքներում ներգրավելուց.

3) մարդասիրական օգնության ընդունումից.

4) մարդասիրական օգնության բաշխումից:

30. Մարդասիրական օգնությունը տրվում է արտակարգ իրավիճակների հանձնաժողովի միջոցով՝ տուժած տարածքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա, որոնք կազմվում են նախօրոք մշակված նորմերի հիման վրա՝ հաշվի առնելով տուժած բնակչության առանձնահատկությունները:

31. Միջազգային մարդասիրական օգնությունը տրվում է միջազգային կազմակերպությունների, առանձին պետությունների և առանձին անհատների կողմից:

32. Միջազգային մարդասիրական օգնությունը կարող է լինել հրատապ միանվագ օգնության ձևով և երկարաժամկետ ծրագրային ձևով: Հրատապ միանվագ մարդասիրական օգնությունն ստացվում է հանրապետությունում նման դեպքերում ստեղծվող հատուկ հանձնաժողովների կողմից և բաշխվում է պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Մարդասիրական օգնությունը կարող է ներկրվել ինչպես օդային, այնպես էլ վերգետնյա տրանսպորտային միջոցներով: Մարդասիրական օգնության ընդունման և բաշխման գործողություններն իրականացվում են համապատասխան հայտերի հիման վրա:

33. Միջազգային մարդասիրական օգնության ստացման օպերատիվությունն ապահովելու նպատակով այն նախօրոք պլանավորվում է՝

1) տուժածների համար սննդի, առաջին անհրաժեշտության առարկաների, վառելիքի նորմեր՝ 10 օրվա համար.

2) դեղորայքի և բժշկական սարքերի համար.

3) ժամանակավոր կացարանների անհրաժեշտ թվի համար:

34. Մարդասիրական օգնության բաշխման նպատակով Հանրապետական համապատասխան հանձնաժողովի կողմից այն, կենտրոնացված ձևով, հանձնվում է Մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովին կից ստեղծված մարդասիրական օգնության բաշխման խմբերին, որոնց ղեկավարում ՄՓՎ ներկայացուցիչը: Այդ հանձնաժողովները, համապատասխան ցուցակների հիման վրա, մարդասիրական օգնությունը բաշխում են բնակչությանը.

Միջազգային մարդասիրական օգնությունը հաշվառվում է ՄՓՎ կողմից:

35. Միջազգային փրկարարական ուժերի ժամանման, փրկարարական աշխատանքների և փոխհամագործակցության կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում փոխգործողությունները կազմակերպվում են արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման, ուժերի նպատակաուղղված օգտագործման և այդ ուժերի միջև գործողությունների հստակեցման նպատակով: Փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ըստ վայրի և ժամանակի.

2) միջազգային փրկարարական խմբերի գործողությունները համակարգում է միջազգային փորձագետների կողմից հիմնված շտաբը.

3) միջազգային ուժերի անմիջական ղեկավարումն աշխատանքային տեղամասերում իրականացնում է աշխատանքային տեղամասի ղեկավարը:

36. ՀՀ ոստիկանության Մարզային վարչության, ազգային անվտանգության Մարզային վարչության, տարածքային զինվորական կայազորի, Մարզի առողջապահական համակարգի հետ փոխգործողությունների կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են նախապես մշակված ու հաստատված փոխգործողությունների պլանների հիման վրա.

2) փոխգործողությունների պլանների համաձայն՝ արտակարգ իրավիճակների դեպքում՝ նշված պետական կառավարման մարմինների ղեկավարների ազդարարումն իրականացնում է ՄՓՎ ՃԿԿ կրտսեր հրահանգիչը, փոխգործողությունների պլաններով նախատեսված ուժերի ազդարարումը, նրանց փրկարարական աշխատանքներին մասնակցությունը և նյութատեխնիկական ապահովումն իրականացնում են տվյալ պետական կառավարման մարմինների ղեկավարները:

37. Հասարակական փրկարարական ջոկատների հետ փոխգործողությունների կազմակերպման կարգը հետևյալն է՝

1) փոխգործողությունները կազմակերպվում և իրականացվում են ՄՓՎ և հասարակական ջոկատների միջև նախապես մշակված ու հաստատված պլանների հիման վրա.

2) փոխգործողությունների պլանների համաձայն հասարակական ջոկատների ազդարարումը և նրանց ղեկավարումը փրկարարական աշխատանքների իրականացման գործընթացում կազմակերպում է ՄՓՎ-ն, իսկ այդ ուժերի անձնակազմերի ազդարարումը,

հավաքը, մուտքն աղետի գոտի և նրանց նյութական ապահովումն իրականացնում են իրենք՝ ջոկատները:

VII. ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՃՇԳՐՏՈՒՄԸ

38. Պլանի ճշգրտման գործընթացը համակարգում է ՄՓՎ-ն:

39. Վթարափրկարարական աշխատանքների պլանավորման կատարելագործումը պետք է նպատակաուղղված ձևով իրականացվի գնահատման մեթոդների, միջոցների և անհրաժեշտ բավարար պայմանների ճշգրտման ու անվտանգության բարձրացման կարգավորման, վերլուծական, իրավական, տնտեսական և կազմակերպչական հիմքերի մշակման հաշվին:

40. Կատարելագործման բազային հիմքեր պետք է ծառայեն հետևյալ աղբյուրները՝

1) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ենթաօրենսդրական ակտերը.

2) համագործակցության մասնակից պետությունների համատեղ հետազոտությունների միջպետական ծրագրերը.

3) երկրաշարժերի թեմայով անցկացվող շտաբային, հրամանատարաշտաբային ուսումնավարժությունների արդյունքները.

4) տեղեկատվական տվյալների բազայի լրամշակումը, նոր հայտնաբերված վտանգավոր գործընթացների, շենքերի և շինությունների (այդ թվում՝ նաև նոր կառուցվող), կենսաապահովման գծերի վիճակի տեխնիկական պլանային գերատեսչական գնահատումը:

Հավելված N 1
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

Ս Խ Ե Մ Ա
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ



Հավելված N 2
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՊԼԱՆ – ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ

NN ըկ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը																	Պատասխանատու կատարողը
		1-ին օր															2-րդ օր	3-րդ օր	
		րոպե			ժամ														
		20	40	60	2	4	6	8	10	12	14	16	18	20	22	24			
1.	Ուժեղ երկրաշարժի դեպքում ՄՓՎ ՃԿԿ-ն, ՀՀ ԱԻՆ սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայություն գործակալության (այսուհետ՝ ՍՊԱԾ) հերթապահից ՃԿԱԿ միջոցով ստանում է ազդանշան (տեղեկատվություն) երկրաշարժի մասին:																		ՄՓՎ
2.	Մարզի և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև ՄՓՎ անձնակազմի ազդարարում																		ՄՓՎ
3.	Մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի աշխատանքների ծավալում, առաջարկություններ ներկայացնելը պլանները գործողության մեջ դնելու մասին																		Մարզպետ, ՄՓՎ պետ
4.	ՄՓՎ անձնակազմի հավաք, խնդրադրում և հերթափոխային աշխատանքի սահմանում																		ՄՓՎ
5.	Հետախուզության կազմակերպում																		ՄՓՎ
6.	Բնակչության ազդարարում տեղի ունեցած երկրաշարժի և բնակչության վարվելակերպի մասին																		ՄՓՎ
10.	Կառավարման և կապի համակարգի պատրաստականության բերում																		
	Կառավարման համակարգի վերականգնում																		Մարզպետ
7.	Երկրաշարժի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների հաղորդում հեռուստատեսության և ռադիոհաղորդումների միջոցով																		ԱԻ հանձնաժողով, ՋԼՄ-ներ

8.	Հետախուզական, փրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքներն իրականացնող ուժերի և միջոցների պատրաստականության բերում՝																		ՄՓՎ, հետախուզության և փրկարարական աշխատանքներում ընդգրկված պետական կառավարման տարածքային մարմիններ, կազմակերպություններ
	հետախուզության ուժերի																		
	փրկարարական ուժերի																		
9.	Երկրաշարժի հետևանքով ստեղծված իրավիճակի ճշգրտում, հետախուզության տվյալների վերլուծում և փրկարարական աշխատանքների կազմակերպման մասին որոշման ընդունում																		Մարզպետ, ՄՓՎ
12.	Երկրաշարժի գոտում բժշկական իրավիճակի ճշգրտում և տեղեկատվության հասցնում ՀՀ առողջապահության նախարարություն (անվերադարձ կորուստներ, սանիտարական կորուստներ, այդ թվում՝ ծայրաստիճան, ծանր, թեթև)																		Մարզպետարանի առողջապահության բաժին
13.	Երկրաշարժի գոտում ինժեներական իրավիճակի ճշգրտում և տեղեկատվության հասցնում համապատասխան կառավարման մարմիններին (ճանապարհների վիճակը, փլատակների քանակը՝ ըստ տեղամասերի և ծավալների, շենքերի և կառույցների թիվն ու վիճակը)																		ՄՓՎ Մարզպետարանի քաղաքաշինության վարչություն
15.	Աղետի գոտում փրկարարական, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքների իրականացում																		ՄՓՎ, մարզպետարան,ոստիկանություն,զինվորական ստորաբաժանումներ
16.	Տուժածներին օգնություն ցուցաբերելու համար բժշկական կազմավորումների և կազմակերպությունների ծավալում																		Մարզպետարանի առողջապահության բաժին

17.	Տուժած բնակչության կենսագործունեության ապահովման ուժերի և միջոցների ծավալում																		ՄՓՎ, Մարզպետարանի ֆին. վարչություն
18.	Տուժած բնակչության ապահովում տաք հագուստով, ջրով, սննդով և առաջին անհրաժեշտության այլ պարագաներով: Վրանային ավանների կառուցում																		ՄՓՎ, Մարզպետարանի ֆին. վարչություն
20.	Մարդասիրական օգնության ընդունման և բաշխման կազմակերպում																		ՄՓՎ, Մարզպետարանի ֆին. և սոցապ. վարչություններ
21.	Բնակչության տեղեկացում տուժածների վիճակի և գտնվելու վայրի մասին																		ՄՓՎ, Մարզպետարանի լրատվական բաժին

Հավելված N 3
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

Ս Խ Ե Մ Ա
ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ



Հավելված N4
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՏՈՒԺԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՑ ԱՆՕԹԵՎԱՆ ՄՆԱՑԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՑԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

NN ը/կ	Վարչական տարածքի անվանումը	Բնակչության թիվը	որից՝			անօթևան մնացած բնակչություն տեղավորվում է							
			անվերադարձ կորուստներ	սանիտարական կորուստներ	անօթևան մնացածներ	ապակենտրոնացված տեղաբաշխում	տեղավորվում է վրանային ճամբարներում		տարահանվում է				
							ճամբարների թիվը	բնակչության թիվը	տարահանվող բնակչության թիվը	տարահանման միջանկյալ հավաքակայանը	տարահանման վայրը	տարահանման երթուղին	անհրաժեշտ տրանսպորտային միջոցների թիվը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.	Ք. Գավառ	27723	1200	886	15500	5000	4	6500	4000	«Գավառտրանս» ՓԲԸ	Ք. Վարդենիս	Գավառ - Վարդենիս	200 ավտոբուս
2.	Ք. Սևան	24000	965	713	10300	3000	3	4300	3000	Կիկյան կամրջի մոտ, «Ատլանտա» խանութի դիմաց	գ.Կարճաղբյուր, գ.Ծովակ, գ.Մ. Մասրիկ	Սևան -Վարդենիս	150 ավտոբուս

Հավելված N5
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ՝ ՍՆՆԴՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

NN ը/կ	Սննդամթերքի անվանումը	0-15 տարեկան		Սննդամթերքի անվանումը	15 և բարձր տարեկան		Փրկարարական ուժեր		
		երեխայի չափաքան. (կգ/մարդ/օր)	3400 երեխայի համար՝ 10 օրվա հաշվ.		չափահաս բնակչության չափաքան. (կգ/մարդ/օր)	7600 չափահաս բնակչության համար՝ 10 օրվա հաշվ.	փրկարա-րական ուժերի չափաքանակը (կգ/մարդ/օր)	ՀՀ ԱԻՆ-ի փրկարարական ստորաբաժանում-ների համար՝ 10 օրվա հաշվարկ /400փրկարար/ (կգ)	փրկարարական կազմա-վորումների համար՝ 10 օրվա հաշվարկ /3500փրկարար/ (կգ)
1.	Ցորեն, հաց	0.08	2720	թեփահանված աշորայի և ցորենի առաջին տեսակի այլուրի խառնուրդից հաց	0.25	19000	0.6	2400	21000
2.	Ձավարեղեն, մակարոնեղեն	0.06	2040	ցորենի առաջին տեսակի այլուրից սպիտակ հաց	0.25	19000	0.43	1720	15050
3.	Վարսակի փաթիլներ «Հերկուլես»	0.06	2040	ձավարեղեն (բրինձ՝ երկարավուն)	0.06	4560	0.1	400	3500
4.	Կարտոֆիլ	0.2	6800	մակարոնեղեն (տեղական)	0.02	1520	0.02	80	700
5.	Բանջարեղեն	0.2	6800	կաթ	0.2	15200	0.5	2000	17500
6.	Մրգային այլուրե	0.2	6800	մսի պահածո	0.06	4560	0.1	400	3500
7.	Շաքար	0.02	680	ձկան պահածո	0.025	1900	0.06	240	2100
8.	Ձուկ, ձկնամթերք	0.08	2720	կարագ	0.03	2280	0.05	200	1750
9.	Կարագ	0.02	680	շաքար	0.04	3040	0.07	280	2450
10.	Միս, մսամթերք	0.16	5440	կարտոֆիլ	0.3	22800	0.5	2000	17500
11.	Կաթ, կաթնամթերք	0.18	6120	բանջարեղեն	0.12	9120	0.18	720	6300
12.	Ձու (հատ)	1	34000	կերակրի աղ (յոդացված)	0.015	1140	0.02	80	700
13.	Կերակրի աղ (յոդացված)	0.002	68	թեյ	0.001	76	0.002	8	70
14.	Թեյ	0.001	34	պանիր	0.02	1520	0.04	160	1400
15.	Պանիր	0.2	6800	ջուր «Նոյ»(լիտր /մարդ/օր)	5	380000	5	20000	175000
16.	Ջուր «Նոյ» (լիտր /մարդ/օր)	2.5	85000						

Հավելված N 6
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՀԱՇՎԱՐԿ

ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

NN ը/կ	Ապրանքի անվանումը	Չափի միավորը	Չափաքանակը	0-15 տարեկան 3400 երեխայի համար	15-ից բարձր 3700 տղամարդկանց համար	15-ից բարձր 3900 կանանց համար
1.	Հագուստ (կոշիկ)	հատ (զույգ)	1	3400	3700	3900
2.	Միանգամյա օգտագործման սպասք	լրակազմ/մարդ	5	17000	18500	19500
3.	Խոր թաս	հատ/մարդ	1	3400	3700	3900
4.	Գդալ	հատ/մարդ	1	3400	3700	3900
5.	Բաժակ	հատ/մարդ	1	3400	3700	3900
6.	Դույլ	հատ/մարդ	0.2	680	740	780
7.	Մետաղյա թեյնիկ	հատ/մարդ	0.1	340	370	390
8.	Խմելու ջրի տարողություն (10-լիտրանոց)	հատ/մարդ	0.25	850	925	975
9.	Օճառ	գ/մարդ	0.2	680	740	780
10.	Լվացքի միջոցներ	գ/մարդ	0.5	1700	1850	1950
11.	Անկողնային պարագաներ	լրակազմ/մարդ	1	3400	3700	3900
12.	Լուցկի	տուփ/մարդ/օր	0.5	-	1850	1950
13.	Ծխախոտ	տուփ/մարդ/օր	1	-	3700	3900
14.	Մոմ	հատ/մարդ/օր	0.25	850	925	975
15.	Վերմակ՝ բամբակյա	հատ/մարդ	1	3400	3700	3900
16.	Սրբիչ	հատ/մարդ	1	3400	3700	3900

Հավելված N 7
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՀԱՇՎԱՐԿ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ

ՀՀ ը/կ	Համայնքի անվանումը	Հրշեջ փրկարարական ջոկատ մարդ/տեխնիկա	ջրափրկարարական ջոկատ մարդ/տեխնիկա	կազմավորումներ		
				կազմ./մարդ	տեխնիկա	հատուկ միջոց
1	2	3	4	5	6	7
1.	Ք. Գավառ	43/4	40/5	60/342	38	4
2.	Ք. Սևան	35/3	-	55/337	62	-
3.	Ք. Մարտունի	35/4	-	29/170	25	-
4.	Ք. Վարդենիս	35/2	-	25/148	23	1
5.	Ք. Ճամբարակ	35/2	-	23/132	17	1
6.	Գ. Հայրավանք	-	-	4/21	1	-
7.	Գ. Բերդկունք	-	-	4/21	1	-
8.	Գ. Գանձակ	-	-	5/27	2	-
9.	Գ. Գեղարքունիք	-	-	4/21	1	-
10.	Գ. Լանջաղբյուր	-	-	6/32	2	-
11.	Գ. Լճափ	-	-	4/21	1	-
12.	Գ. Ծաղկաշեն	-	-	4/21	1	-
13.	Գ. Ծովազարդ	-	-	6/32	2	-
14.	Գ. Կարմիրգյուղ	-	-	9/48	3	-
15.	Գ. Նորատուս	-	-	9/48	3	-
16.	Գ. Սարուխան	-	-	4/49	4	-
17.	Գ. Ազատ	-	-	4/21	1	-
18.	Գ. Կութ	-	-	4/21	1	-
19.	Գ. Գեղաքար	-	-	4/21	1	-
20.	Գ. Ախպրաձոր	-	-	4/21	1	-
21.	Գ. Այրք	-	-	4/21	1	-
22.	Գ. Վ. Շորժա, Ն. Շորժա	-	-	4/21	1	-
23.	Գ. Ավազան	-	-	4/21	1	-

24.	Գ. Արփունք	-	-	4/21	1	-
25.	Գ. Արեգունի	-	-	4/21	1	-
26.	Գ. Դարանակ	-	-	4/21	1	-
27.	Գ. Փամբակ	-	-	4/21	1	-
28.	Գ. Ծափաթաղ	-	-	4/21	1	-
29.	Գ. Գեղամասար	-	-	4/21	1	-
30.	Գ. Կախակն	-	-	4/21	1	-
31.	Գ. Կուտական	-	-	4/21	1	-
32.	Գ. Տրետուք	-	-	4/21	1	-
33.	Գ. Նորաբակ	-	-	4/21	1	-
34.	Գ. Ջաղացաձոր	-	-	4/21	1	-
35.	Գ. Շատվան	-	-	4/21	1	-
36.	Գ. Փ. Մասրիկ	-	-	4/21	1	-
37.	Գ. Նորակերտ	-	-	4/21	1	-
38.	Գ. Սոտք	-	-	4/21	1	-
39.	Գ. Ակունք	-	-	6/32	2	-
40.	Գ. Շատջրեք	-	-	4/21	1	-
41.	Գ. Լճավան	-	-	4/21	1	-
42.	Գ. Մաքենիս	-	-	4/21	1	-
43.	Գ. Լուսակունք	-	-	4/21	1	-
44.	Գ. Խաչաղբյուր	-	-	4/21	1	-
45.	Գ. Ծովակ	-	-	4/21	1	-
46.	Գ. Կարճաղբյուր	-	-	6/31	1	-
47.	Գ. Մ. Մասրիկ	-	-	6/31	1	-
48.	Գ. Վանևան	-	-	6/31	1	-
49.	Գ. Տորֆավան	-	-	4/21	1	-
50.	Գ. Գեղամաբակ	-	-	4/21	1	-
51.	Գ. Կալավան	-	-	4/21	1	-
52.	Գ. Դպրաբակ	-	-	4/21	1	-
53.	Գ. Աղբերք	-	-	4/21	1	-
54.	Գ. Շորժա	-	-	4/21	1	-
55.	Գ. Այգուտ	-	-	4/21	1	-
56.	Գ. Անտառամեջ	-	-	4/21	1	-
57.	Գ. Ձորավանք	-	-	4/21	1	-
58.	Գ. Դրախտիկ	-	-	4/21	1	-
59.	Գ. Արտանիշ	-	-	5/26	1	-

60.	Գ. Գետիկ	-	-	5/26	1	-
61.	Գ. Մարտունի	-	-	5/26	1	-
62.	Գ. Թթուջուր	-	-	5/26	1	-
63.	Գ. Ջիլ	-	-	5/26	1	-
64.	Գ. Վահան	-	-	5/26	1	-
65.	Գ. Գեղամավան	-	-	4/21	1	-
66.	Գ. Դդմաշեն	-	-	4/21	1	-
67.	Գ. Ջովաբեր	-	-	4/21	1	-
68.	Գ. Լճաշեն	-	-	7/38	3	-
69.	Գ. Ծաղկունք	-	-	4/21	1	-
70.	Գ. Ծովագյուղ	-	-	6/32	2	-
71.	Գ. Նորաշեն	-	-	4/21	1	-
72.	Գ. Չկալովկա	-	-	4/21	1	-
73.	Գ. Վարսեր	-	-	4/21	1	-
74.	Գ. Սեմյոնովկա	-	-	4/21	1	-
75.	Գ. Աստղաձոր	-	-	6/32	2	-
76.	Գ. Արծվանիստ	-	-	6/32	2	-
77.	Գ. Գեղհովիտ	-	-	9/48	3	-
78.	Գ. Երանոս	-	-	9/48	3	-
79.	Գ. Զոլաքար	-	-	9/48	3	-
80.	Գ. Ծովասար	-	-	6/32	2	-
81.	Գ. Լիճք	-	-	9/48	3	-
82.	Գ. Ծակքար	-	-	7/37	2	-
83.	Գ. Ծովինար	-	-	6/32	2	-
84.	Գ. Ձորագյուղ	-	-	9/48	3	-
85.	Գ. Մադինա	-	-	4/21	1	-
86.	Գ. Ն. Գետաշեն	-	-	9/48	3	-
87.	Գ. Վաղաշեն	-	-	7/37	2	-
88.	Գ. Վարդաձոր	-	-	6/32	2	-
89.	Գ. Վարդենիկ	-	-	9/49	4	-
90.	Գ. Վ. Գետաշեն	-	-	9/58	3	-
Ընդամենը		183/15	40/5	616 / 3368	288	-

Հավելված N 8
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

Ս Խ Ե Մ Ա

ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ



Հավելված N 9
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ

Հ/Հ	Համայնքի անվանումը	Ընդամենը	էքսկավատոր	մղան	Ավտո կռունկ	Ինքնաթափ	կոմպրեսոր	Այլ տեծնիկա
1	2	3	4	5	6	7	8	9
1.	***Ք. Գավառ***	65	2	1	5	35	2	20
2.	Գանձակ	22	2	0	3	9	0	8
3.	Ծաղկաշեն	6	1	0	0	2	0	3
4.	Սարուխան	19	0	1	2	10	0	6
5.	Լանջաղբյուր	7	0	0	1	2	0	4
6.	Գեղարքունիք	8	0	0	0	4	0	4
7.	Կարմիրգյուղ	53	2	0	3	26	0	22
8.	Նորատուս	40	1	4	2	17	2	14
9.	Հայրավանք	10	1	1	0	5	0	3
10.	Բերդկունք	6	0	0	0	3	0	3
11.	Ծովազարդ	16	0	1	0	9	0	6
12.	Լճափ	9	0	0	0	2	0	7
13.	***Ք.Սևան***	71	4	3	9	25	8	22
14.	Զովաբեր	11	0	0	0	7	0	4
15.	Դդմաշեն	7	0	0	0	0	2	5
16.	Ծաղկունք	17	1	3	0	7	0	6
17.	Գեղամավան	14	0	0	0	8	0	6
18.	Վարսեր	14	7	1	0	2	0	4
19.	Լճաշեն	44	2	4	2	23	0	13
20.	Չկալովկա	6	0	0	0	4	0	2
21.	Նորաշեն	9	1	1	0	3	0	4
22.	Ծովագյուղ	38	1	2	1	25	0	9

1	2	3	4	5	6	7	8	9
23.	Սեմյոնովկա	4	0	0	0	0	0	4
24.	***Ք. Մարտունի***	56	3	0	15	30	0	8
25.	Աստղաձոր	24	2	0	0	2	0	20
26.	Արծվանիստ	28	1	0	0	2	0	25
27.	Գեղհովիտ	51	3	4	0	24	0	20
28.	Ն. Գետաշեն	47	4	1	2	15	0	25
29.	Վ. Գետաշեն	52	2	0	0	15	0	35
30.	Երանոս	32	0	0	0	10	0	22
31.	Զոլաքար	32	2	0	0	15	0	15
32.	Ծովասար	16	1	1	0	4	0	10
33.	Լիճք	41	1	1	1	20	3	15
34.	Ծակքար	18	1	1	0	6	0	10
35.	Ծովինար	19	1	1	0	5	0	12
36.	Ձորագյուղ	54	1	2	1	35	0	15
37.	Մադինա	26	0	0	0	21	0	15
38.	Վաղաշեն	26	1	1	0	4	0	20
39.	Վարդաձոր	38	3	3	0	20	0	12
40.	Վարդենիկ	50	5	3	1	18	0	23
41.	***Ք. Ճամբարակ***	56	6	6	3	21	0	20
42.	Աղբերք	5	0	0	0	0	0	5
43.	Անտառամեջ	5	0	0	0	0	0	5
44.	Արտանիշ	8	1	1	0	1	0	5
45.	Այգուտ	8	0	0	0	2	0	8
46.	Գետիկ	4	0	0	0	0	0	4
47.	Դպրաբակ	2	0	0	0		0	2
48.	Դրախտիկ	13	0	1	0	6	0	6
49.	Թթուջուր	17	2	4	0	4	0	7
50.	Կալավան	8	0	1	0	1	0	6
51.	Ձորավանք	6	1	0	0	0	0	5
52.	Գ.Մարտունի	11	1	1	1	3	0	5
53.	Շորժա	8	1	0	2	2	0	3
54.	Ջիլ	6	0	0	0	3	0	3
55.	Վահան	12	1	1	0	3	0	7
56.	***Ք. Վարդենիս***	54	3	3	1	26	1	20

1	2	3	4	5	6	7	8	9
57.	Ազատ	2	0	0	0	0	0	2
58.	Ակունք	21	0	0	0	5	0	14
59.	Ախպրաձոր	8	0	0	0	2	0	6
60.	Այրք	7	0	0	0	2	0	5
61.	Ավազան	5	0	0	0	2	0	3
62.	Արեգունի	6	1	0	0	2	0	3
63.	Արփունք	8	0	0	0	2	0	6
64.	Գեղամաբակ	1	0	0	0	0	0	1
65.	Գեղամասար	5	1	0	0	0	0	4
66.	Գեղաքար	2	0	0	0	0	0	2
67.	Դարանակ	2	0	0	0	0	0	2
68.	Լճավան	13	0	2	0	8	0	3
69.	Լուսակունք	21	1	0	0	10	0	10
70.	Խաչաղբյուր	17	0	0	0	3	0	14
71.	Ծափաթաղ	1	0	0	0	0	0	1
72.	Ծովակ	23	0	1	2	5	0	15
73.	Կախակն	3	0	0	0	0	0	3
74.	Կարճաղբյուր	18	1	1	0	5	1	10
75.	Կութ	2	0	0	0	0	0	2
76.	Կուտական	1	0	0	0	0	0	1
77.	Մաքենիս	29	0	0	0	8	0	21
78.	Մ. Մասրիկ	41	0	0	1	20	0	20
79.	Նորաբակ	5	0	0	0	0	0	5
80.	Նորակերտ	23	0	1	0	7	0	15
81.	Շատջրեք	10	1	0	0	3	0	6
82.	Շատվան	1	0	0	0	0	0	1
83.	Ջաղացաձոր	1	0	0	0	0	0	1
84.	Տորֆավան	1	0	0	0	0	0	1
85.	Տրետուք	1	0	0	0	0	0	1
86.	Փամբակ	2	0	0	0	0	0	2
87.	Փ.Մասրիկ	6	0	0	0	2	0	4

Հավելված N 10
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ

ՈՒԺԵՂ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՊԱՏՎԱՐՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՓԼՈՒԶՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ

NN ը/կ	Ջրամբարների (մարզերի) անվանումները	Ավազանային կառավարման տարածքի անվանումը	Շահագործման հանձնման տարեթիվը	Հնարավոր ջրածածկման գոտում գտնվող բնակավայրերը (բնակչության թիվը)	Պատվարի բարձրությունը, տիպը		Ջրամբարների ծավալները			Ջրի հայելու մակերեսը (հա)
					Հ (մ)	տիպը	ընդհանուր (մլն/մ³)	օգտակար (մլն/մ³)	մեռյալ (մլն/մ³)	
1.	Արծվաշեն	Հրազդանի	1977 թ.	-	29	հողային	2.03	1.82		26
2.	Գեղարքունիք 1	----\\ ----	1986 թ.	-	14.5	հողային	0.07	0.065	0.005	6
3.	Գեղարքունիք 2	----\\ ----	1986 թ.	Լանջաղբյուր (2364), Սարուխան (7690), Կարմիրգյուղ (5448), Գեղարքունիք (1880), Գավառ(25671), Նորատուս (5671)	14.5	հողային	0.328	0.3	0.028	6.5
4.	Լանջաղբյուր 2	----\\ ----	1977 թ.	Լանջաղբյուր (2364), Սարուխան (7690), Կարմիրգյուղ (5448), Գեղարքունիք (1880), Գավառ(25671), Նորատուս (5671)	5.9	հողային	0.12	0.11	0.01	3.1
5.	Լանջաղբյուր 1	----\\ ----	1956 թ.	-	16.7		0.35	0.27	0.08	8.4
6.	Ղազիգյոլ	Սևանի	1960 թ.	-	1.5	հողային	0.208	0.14	0.068	3.5

Հավելված N 11
ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Գեղարքունիքի մարզի
գործողությունների պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒԺԵՐԻ

Համայնքի անվանումը	Աղետների բժշկության կազմավորումների և անձնակազմերի թիվը՝ ըստ մասնագիտական ուղղությունների																								
	հրատապ նախաբժ. օգն. ըն.	հրատապ. բժշկ. օգնութ. ըն.	շտապ բուժ.օգ. բրիգ. (գծային)		վիրաբուժական	ընդհանրաբուժական	վիրաանդամաբեկման	ռոմատոիդաբանական	ուռուցքաբանական	մանկաբուժական-գինեկոլոգիական	մանկական վիրաբուժական	հոգեբուժական	ինֆեկցիոնիստական	ալերգոլոգական	դիմածնոտային	ինֆեկցիոնիստական	ՁԻՀ-վարակի	ուռուցքային	ատեղեցիոնիստական	վերակենդանացման	մանկաբուժական	թերապևտիկ	հիգիենիստական	գաստրոենտերոլոգական	տուբերկուլյոզ.	ՀՀ ԱՆ ՊՀՀ-ի ոստիկանության
			բժշկական	բուժական																					
Գավառ	12 48	12 48	2 8	2 6						1 5												2 6			
Սևան	11 44	11 44	1 4	1 3						1 5												2 6			
Մարտունի	9 36	8 32	1 4	1 3						1 5												2 6			
Ճամբարակ	6 24	6 24	1 4	1 3						1 5												2 6			
Վարդենիս	7 28	7 28	1 4	1 3						1 5												2 6			
Ընդամենը՝ Մարզում	45 180	44 174	6 24	6 18						5 25												10 30			